Azg
armenian daily

19 ՅՈՒՆՈՒԱՐ 1999 ԵՐԵՔՇԱԲԹԻ # 6 (1751)

Որտե՞ղ կհանգրվանի Օջալանը

Նախորդ օրը Իտալիայից դեռեւս անհայտ ուղղությամբ հեռացած Քրդստանի ազատագրական կուսակցության (PKK) լիդեր Աբդուլլահ Օջալանին փնտրում են շատ երկրներում, այդ թվում նաեւ Հայաստանում: Թուրքական աղբյուրները նրան ընդունելու թեկնածու երկրների շարքում են դասում նաեւ Լիբիան, Բելառուսը, Ռուսաստանը, Էստոնիան, անգամ Հարավաֆրիկյան Հանրապետությունը: Սնարք գործակալության խնդրանքով մեկնաբանելով թուրքական ԶԼՄ-ների հաղորդումներն այդ մասին, PKK-ի ներկայացուցիչ Սաբրի Չանը Թբիլիսիում ասել է, որ Օջալանը Հայաստանում չէ եւ չի պատրաստվում այցելել: Նրա ասելով, շատ շուտով PKK-ն պատշաճական հաղորդագրություն կտարածի, որում կհայտարարվի Օջալանի գտնվելու կոնկրետ վայրը: Միջազգային լրատվամիջոցները երեկ տեղեկացրին, որ Հունաստանը մերժել է Օջալանին ապաստան տալ, իսկ Իտալիայի պատշաճական աղբյուրները Թուրքիայի արտգործնախարարության հարցմանը պատասխանել են, թե իրենց չի հետաքրքրում այլեւս Օջալանի գտնվելու վայրը:

ԹԵՐՈՒԹՅՈՒՆ

Ալիեւի Անկարա տեղափոխումը հարցականներ է ծնում

Արտի՞ սոպա՞, թոքաբո՞ւրբ, թե՞ ուրիշ պատճառ

Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին հիվանդանոց տեղափոխելու հետ Հեյդար Ալիեւին Բաքվից Անկարա անակնկալ տեղափոխելու փաստը կիրակի օրը կազմեց օրվա գլխավոր իրադարձությունը, ինչը երեկ մնաց միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում: Իտալիայից Աբդուլլահ Օջալանի «անհայտ» ուղղությամբ հեռանալու եւ Բրազիլիայում տնտեսական կոլապսի մասին լուրերի հետ:

Այդուհանդերձ, Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի Բաքու ուղարկած բժիշկների զույգ բրիգադների ուղեկցությամբ կիրակի օրը Ալիեւի Անկարա տեղափոխումը երեկ շարունակում էր մնալ եթե ոչ խորհրդավորության մեջ, ապա գոնե հարցականների սվերի ներքո:

Իրավիճակի սուղությունը պարզելու մեջ որեւէ ուղղում չմտցրին Ոյթեր գործակալության Բաքվի եւ Անկարայի թղթակիցների հոդվածները: Նրանց թղթակցություններում ասվածն այն էր, որ Ադրբեջանի նախագահն անցած շաբաթ հիվանդացել է գրիպով, ուրբաթ օրը բժիշկները թոքաբորբ են կասկածել, իսկ կիրակի օրը Բաքու ժամանած թուրք բժիշկները գտել են, որ 9 տարի բուժգննման չենթարկված 75 տարեկան Ալիեւը պետք ունի սուղման: Թուրք բժիշկները, Ոյթերի Անկարայի թղթակից Էլիֆ Ուրալի ասելով, ինֆեկցիայի հետեւանքով արտի նոպա են ախտորոշել Ալիեւին:

Երեկ նույնը կրկնեց նաեւ թուրքական TRT-1 հեռուստատեսությունը, հակառակ նախորդ օրը Անկարայի օդանավակայանում լրագրողների հետ Դեմիրելի եւ Ալիեւի հետ ունեցած կարճ հանդիպման ընթացքում վերջինիս պնդմանը, թե մինչ իր բարեկամ Դեմիրելի ուղարկած բժիշկների ժամանումն, արդեն իրեն լավ էր զգում: Անկարայում լրագրողներն Ալիեւին գտել էին իր տարիքի համեմատ լավ, բայց սովորականից գունատ:



ՌՈՅԹԵՐ-ՀԱՅԿԱՐ

Ժամանելուց անմիջապես հետո Ադրբեջանի նախագահին Դեմիրելի ուղեկցությամբ տեղափոխել էին Գյուլհանեի ռազմական ակադեմիական հիվանդանոց: Երեկ, ըստ TRT-1-ի, նախագահ Դեմիրելն ընդամենը 2 լրագրողի ուղեկցությամբ կրկին այցելել է հիվանդանոց «իր բարեկամին» տեսության:

Մյուս կողմից, ըստ Սնարք գործակալության հայթայթած տեղեկությունների, ադրբեջանական ընդդիմության ճամբարում Ալիեւի երկրից բացակայելը աշխուժություն է առաջացրել: «Մուսավաթ» կուսակցության ղեկավար Իսա Ղամբարը, օրինակ, մտավախություն ունի, որ Ալիեւի հիվանդությունից կարող են օգտվել «իրավիճակն առակայունացնելու մեջ» շահագրգռված օտարերկրյա ուժերը»: Ժողճակատի առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյն իր հերթին հայտարարել է, որ իշխանությունը թաքցնում է իրականությունն Ալիեւի հիվանդության մասին, եւ եթե վերջինս ասպարեզից հեռանա, ապա Ադրբեջանի ժողովուրդը թեթեւացած շունչ կփաշ:

Իր հերթին, վկայակոչելով «Ազատություն» ռադիոկայանը, Նոյյան տարան գործակալությունը երեկ տեղեկացրեց, որ Ադրբեջանի ոստիկանությունն Ալիեւի հիվանդության կապակցությամբ Բաքվում խստացրել է հսկողության ռեժիմը: Մեր կարծիքով, դատելով երեւույթներից, Ալիեւի հիվանդությունը ներկայացվածից շատ ավելի լուրջ է, եւ եթե նրա բացակայությունը նախատեսվածից 1 շաբաթից երկար տեւի, ապա Ադրբեջանում ապակայունացման մասին կասկածները կարող են իրականություն դառնալ: Չմոռանանք, որ Հեյդար Ալիեւը դեռեւս 1987 թ., երբ տակավին անդամ էր ԽՄԿԿ քաղբյուրոյի, 3 ամիս մոսկովյան հիվանդանոցներից մեկում բուժվել էր ուրի կաթվածից:

ՄՈՍԿՎԱ

Ելցինին չեն վիրահատի

Նշանակված է դեղորայքային բուժում

ՄՈՍԿՎԱ, 18 ՀՈՒՆՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ: Նախագահական վարչակազմի ղեկավար Նիկոլայ Բորդյուժան այսօր ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդեց, որ բժիշկների կոնսիլիումը հաստատել է Բորիս Ելցինի՝ նախօրյակին արված ախտորոշումը (սրամոխի խոցի արյունահոսություն) եւ ասաց, որ կենտրոնական կլինիկական հիվանդանոցում նախագահը

ՌՈՅԹԵՐ-ԱՐՄԵՆՊՐԵՍ

«հանգիստ է անցկացրել» առաջին գիշերը:

Նիկոլայ Բորդյուժան հաղորդեց, որ կոնսիլիումի արդյունքների մասին իրեն զեկուցել է նախագահի բժշկական կենտրոնի ղեկավար Սերգեյ Միրոնովը: Վերջինիս ասելով, Ելցինին վիրահատական միջամտության չեն ենթարկելու, այլ նշանակված է դեղորայքային բուժում:

Առայժմ վարչակազմի ղեկավարներից ոչ ոք չի եղել նախագահի մոտ՝ կենտրոնական կլինիկական հիվանդանոցում: Պետության ղեկավարի համար նշանակված խիստ անկողնային ռեժիմի դեպքում նրան այցելել թույլատրված է առայժմ միայն ընտանիքի անդամներին, ծաղրեց Նիկոլայ Բորդյուժան:

ՀԱՍԱՐՈՍ

1915-ը «Էքսպրեսի» էջերում

Փարիզի «Յառաջ» օրաթերթը տեղեկացնում է, որ ֆրանսիական հանրահայտ «Էքսպրես» շաբաթաթերթն իր դեկտեմբերի 31-հունվարի 6-ի համարում 150 լուսանկարներով ներկայացրել է ավարտին մոտեցող դարը, որտեղ 1915 թվականի առաջին նշանակության դեպք է համարել Հայկական ցեղասպանությունը: Լուսանկարին կից զետեղվել է «Ցեղասպանություն Հայաստանի մեջ» խորագիրը: Հակիրճ բացատրության մեջ նշվել է, որ որպես հետեւանք 5000 հայերի ռուսական բանակ թափանցելուն, օսմանյան ուժերը դիմել են ջարդերի, հատկապես Վանի շրջանում, որտեղ 50 հազար զոհ է արձանագրվել: Թուրքահայերը տեղահանվել են Սիրիայի եւ Իրաքի անապատները, որտեղ էլ կոտորվել է մեկուկես միլիոնը (ըստ թուրքերի՝ 300 հազար), նշված է բացատրության վերջում:

2000 թվականին ՀՀ խնայբանկում կվերականգնվե՞ն ավանդները

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ նախագահին առընթեր քաղաքական խորհրդի սոցիալ-տնտեսական հանձնաժողովը վերջերս ընդունել է եզրակացություն՝ խնայբանկում քաղաքացիների ավանդների վերականգնման եւ հատուցման մասին: Ինչպես հայտնեց Հայաստանի սոցառողների միության նախագահ Արմեն Պողոսյանը, այդ եզրակացության համաձայն, առաջարկվել է ԽՍՀՄ խնայբանկի Հայաստանի բաժանմունքում մինչեւ 1991 թվականի հունվարի 1-ը ներդրած ավանդների նկատմամբ կատարել վերահաշվարկ՝ հիմք ընդունելով գնողունակության անփոփոխության սկզբունքը՝ դրանք ծեւակերպելով որպես պետական ներքին պարտք, նույն սկզբունքը տարածել հետագա տարիների ավանդների վրա, դրանց մարումը իրականացնելով սկսած 2000 թ. հունվարի 1-ից, ամենամյա չափաբաժիններով, պետբյուջեի 5 տոկոսի սահմաններում, այդ նպատակով հատկացված գումարներից՝ հաշվի առնելով տարիքային խմբերը եւ ավանդների մեծությունը: Եզրակացությունը հավանության է արժանացել ՀՀ նախագահի կողմից, հայտնեց Ա. Պողոսյանը: Առաջարկվել է կազմել եւ ներկայացնել այն իրականացնելու գործնական ծրագիր:

Էջեւիթը սպանչ վստահության քվե

ԱՆԿԱՐԱ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հունվարի 17-ին Թուրքիայի վարչապետ Բ.Էջեւիթը խորհրդարանում ստացավ պատգամավորների մեծամասնության վստահության քվե՝ 306 կողմ եւ 188 դեմ ձայների հարաբերակցությամբ: Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, այժմ էջեւիթը, որին սպասարկում է պահպանողական երկու կուսակցություն, կարող է ծեւավորել խորհրդարանական փոքրամասնության կառավարություն, եւ Թուրքիան սահուն անցում կկատարի դեպի արդիլի 20-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունները:

OTE-ն բարձրացնում է հեռախոսակապի վարձը նաեւ Հունաստանում

Հունաստանում Ինտերնետից օգտվողները՝ ընդարձակած հեռախոսակապի վարձի թանկացումից, անցած ուրբաթ մտադրվել էին բոյկոտել ցանցի աշխատանքները: Երկրում զանգվածային այս բողոքն իր չափերով աննախադեպ է համարվում: Կարի արդեն իսկ չափազանց բարձր վարձերը գործնականում անմատչելի են դարձնում ցանցի օգտագործումը, ասվում է Ինտերնետից օգտվողների խմբի հաղորդակցության մեջ: Այսպիսի քաղաքականությունը հույներին մեկուսացնում է աշխարհով սփռված իրենց հայրենակիցներից, խոչընդոտում է ձրի տեղեկատվությունը եւ երեխաների կրթությունը, փակում է կիբեռնետիկական տարածությունը: Խմբի անդամները աշխարհով մեկ իրենց բարեկամներին խնդրել են բողոքի հաղորդագրություններ ուղղել Հունաստանի վարչապետին եւ OTE պետական հեռախոսակապային ընկերությանը:

ԱՄՆ-ի եւ եվրոպական մյուս երկրների հետ համեմատած Հունաստանում Ինտերնետից օգտվողների թիվը անհամեմատ փոքր է: Շատերի կարծիքով դրա պատճառը բարձր վարձավճարն է: Թանկացման հետ մեկտեղ OTE-ն հրապարակել է մի հայտարարություն, ըստ որի վարձավճարը կիջեցնի այն օգտագործողների համար, ովքեր կօգտվեն OTE-ի սեփականություն՝ OTEnet փրովայդերի ծառայությունից: Մյուս փրովայդերները կարծում են, որ այսպիսի քաղաքականությունն ուղղված է ի շահ պետական OTE ընկերության եւ ոտնահարում է ազատ մրցակցության կանոնները:

«Մենք երազում ենք գոնե մեկ օր ապրել մի երկրում, որտեղ մեր բանականությունը չի անարգվի պետության կողմից, որի կարծիքով 50 տոկոս թանկացումը իրականում 5-ժամանոց է», ասում է HellasNet ախոյան ընկերության ղեկավար Ջորջ Թեոդորոպուլոսը, տեղեկանում ենք Ոյթեր գործակալությունից:

ՀԱԿԱԶՊԵՑՈՒԹՅՈՒՆ

Ամերիկյան սենատորը առաջարկում է առեւտրական պատժամիջոցներ կիրառել Հայաստանի դեմ

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: ԱՄՆ-ի Յութայի նահանգից սենատոր Օրին Հեթչը (Orrin G. Hatch) նամակ է հղել ԱՄՆ-ի առեւտրական ներկայացուցիչ Չերլին Բարշեւսկուն, առաջարկելով նրան հայ-ամերիկյան առեւտրական հարաբերությունները կարգել «Անգլիա Կոնսալտինգ» եւ Արմենտել ընկերությունների միջեւ վեճի արդյունքին: Մասնավորապես, նա առաջարկում է այդ գործի արդյունքով պայմանավորել ԱՄՆ-ի աջակցությունը Հայաստանը Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն (ԱՀԿ) անդամակցելու հարցում:

Յութայի նահանգում գրանցված «Անգլիա Կոնսալտինգ» ընկերությունը պահանջել էր Արմենտելից 200 հազար դոլարի փոխհատուցում իր մատուցած ծառայությունների համար: Արմենտելը մերժել էր այն հիման վրա, որ Արմենտելի կողմից համապատասխան պայմանագիրը ստորագրած անձը չի ունեցել նման լիազորություն: Երեւանի Սպանդարյանի առաջին ատյանի դատարանը եւ Հայաստանի Վճռաբեկ դատարանը վեճը լուծել են հօգուտ Արմենտելի:

Սենատոր Հեթչը նաեւ առաջարկում է ճնշարկել Հայաստանի նկատմամբ առեւտրական պատժամիջոցների կիրառման հնարավորությունը: Նա մասնավորապես պնդում է, որ հիշյալ գործը ցույց է տալիս, որ Հայաստանի իրավական համակարգը «անբավարար է եւ անվստահելի» ամերիկյան եւ հայկական ընկերությունների միջեւ լավ բիզնես իրականացնելու տեսակետից:

Սենատորը նաեւ նամակ է հղել ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Ռուբեն Շուգարյանին, կոչ անելով նրան անձամբ միջամտել հիշյալ գործին: Նա հայտնել է, որ հակառակ դեպքում մտադիր է ընդդիմանալ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցությանը, մասնավորապես, ԱՄՆ-ի Սենատի ֆինանսական հանձնաժողովում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՄՏԱԾՈՒՄ

Մարդը՝ տեխնիկայի՞, թե՞ տեխնիկան՝ մարդու համար

Տեռախոսավարձի շուրջ բորբորված կրքերը «համազգային ճնշման» տակ ընդունված ժամանակավոր հրադադարից հետո անորոշ ժամանակով լռեցին, սակայն ակնհայտ է, որ «հեռախոսային օփումների» սահմանափակման մահացու վտանգը շարունակելու է պղտորել ասել-խոսելու նկատմամբ թուլություն հետ» կապող վերջին օղակը՝ հեռախոսակապը, ինչը սպառնում է լցնել ժողովրդի համբերության բաժակը: Թեպետ, ինչպես հարկն է ծանրութեթև անելու դեպքում կարելի է հանգել ավելի քան փիլիսոփայական եզրակացության: չկա չարիք առանց բարիքի: Իսկապես, հեռախոսային խոսակցությունների սահմանափակումը սեփական ժամանակը խնայելու արդյունավետ միջոց է (յուրաքանչյուր ոք առանց դժվարության կարող է հաշվել, թե որքան ավելորդ ժամանակ է վատնում հեռախոսի վրա «ինչ կա, չկա» հարցին սպառիչ պատասխան տալու եւ՝ ստանալու համար): Քանի որ բնակչության զբաղվածությունը տվյալ պահին չափազանց ցածր է, այդ խնդիրն առայժմ արդիական չէ, սակայն ափսաստեղերի ավելացման հետ կարող է նոր հնչեղություն ստանալ՝ հեռախոսացանցի բաժանորդներին հիշեցնելով «ժամանակը ոսկի է» մոռացված թեզը:

Մյուս կողմից, եթե հեռախոսային օփումներն այնքան թանկանան, որ հեռախոսազրույցների ծախսատարությունը գերազանցի ընկերներին եւ բարեկամներին այցելելու գործընթացի «ինքնարժեքը», ապա կարող է վերականգնվել փոխադարձ այցելությունների խախտված ավանդույթը՝ լրացնելով մարդկային փոխհարաբերություններում առաջացած աննրեելի բացը, նույնիսկ դատարկ ծեռով հյուր գնալով կամ հյուրասիրությունը մի բաժակ սուրճով սահմանափակելու պայմանով: Այնպես որ, չի բացառվում, որ Արմենտելը, կամ որ նույնն է, հունական OTE ընկերությունը, առայժմ հետաձգված «սակագնային կարգավորումը» նախաձեռնելով, առաջնորդվել է բացառապես մեր շահերով...

Սա՝ կես-կատակ, իսկ լուրջ խոսելու դեպքում ստիպված ենք վերհիշել, որ հեռախոսավարձին առնչվող սակագնային նորամուծությունը հիմնավորվում էր առաջին հերթին արդիական հեռախոսակապի ապահովման «գերխնդրով»: OTE-ի ղեկավարներն իրենց անդրանիկ հայաստանյան ասուլիսում, մասնավորապես, խոստացան ոչ հեռու ապագայում «հեռախոսաֆիկացնել» գյուղական շրջանները: Հարց է առաջանում, սակայն. գյուղացին ի վիճակի՞ է օգտվել այդ «հեռախոսաֆիկացման» խոստումնալից պտուղներից: Երեւանցիները, գյումրեցիները, մյուսները կարո՞ղ են վճարել այդ, թեկուզեւ տեխնիկայի վերջին ճիչով արդիականացված հեռախոսացանցի ծառայությունների դիմաց: Թե՞ հեռախոսն էլ դառնալու է շեղության առարկա, ինչպես շեղության առարկա են դարձել «երկու ծեռով լողանալու», ինքնաթիռով ըստ պահանջի եւ անհրաժեշտության տեղաշարժվելու, բնակարանները ժամանակ առ ժամանակ վերանորոգելու, տախտակներ ծառայությունից օգտվելու եւ այլ «վնասակար» սովորություններ:

Անհեթեթություն կլիներ պնդել, թե հեռախոսացանցը կամ, ասենք, էներգետիկ համակարգը չպետք է բարենորոգվեն: Տեխնիկական վերազինումն, անշուշտ, անվիճելի անհրաժեշտություններից է: Սակայն մի՞թե սոցիալական բեռնեցող մեր հայրենակիցների միտքը: Սոցիալական ծանր կացությունն արդեն իսկ, ինչպես հայտնի է, սահմանափակել է ընկերներին եւ բարեկամներին այցելելու մարդկանց ցանկությունն ու հնարավորությունը՝ ոչ միայն տրանսպորտային դժվարությունների (քաղաքի մի ծայրից մյուսը գնալ-գալու ծախսերն անգամ անլուծելի խնդիր են շատերի համար), այլեւ հյուր գնալու եւ հյուր ընդունելու հայկական չափանիշների հետեւանքով: Իրեն հարգող ո՞ր հայը դատարկ ծեռով հյուր կգնա ընկերոջը կամ ազգականին, կամ ո՞ր հայը ընկերոջը կամ ազգականին հյուրընկալելով, կսահմանափակվի մի բաժակ սուրճ կամ թեյ մատուցելով: Պատասխանը հայտնի է, ուստիեւ մարդկանց ուղղակի օփումները բնական ճանապարհով փոխարինվում են անուղղակի (հեռախոսային) օփումներով: Կենցաղային եւ սոցիալական հոգսերի ընտրանին էականորեն սահմանափակում է նաեւ հայերիս մշակութային հետաքրքրությունների շրջանակը: Կինոթատրոնները, եթե սրճարանների, մեքենաների պահեստամասերի վաճառքի կետերի կամ տոնավաճառների չեն վերածվել, սակավ այցելուներ ունեն, թատերական ներկայացումները եւ համերգները, որոշ երջանիկ բացառություններով, ընթանում են կիսով չափ դատարկ դահլիճներում: Այստեղից՝ հեռախոսային երկարատեւ խոսակցությունների պրակտիկան եւ հեռախոսացանցի համապատասխանաբար ծանրաբեռ ափսաստանը՝ տրանից բխող հետեւանքներով (խոսքը հեռախոսացանցից օգտվելու, մեղմ ասած, դժվարության մասին է):

Հիմա Արմենտելն, ըստ էության, պատասխան կտրել Հայաստանի քաղաքացիների մեծ մասին «կյանքի ժամանակը խնայելու արդյունավետ միջոց է (յուրաքանչյուր ոք առանց դժվարության կարող է հաշվել, թե որքան ավելորդ ժամանակ է վատնում հեռախոսի վրա «ինչ կա, չկա» հարցին սպառիչ պատասխան տալու եւ՝ ստանալու համար): Քանի որ բնակչության զբաղվածությունը տվյալ պահին չափազանց ցածր է, այդ խնդիրն առայժմ արդիական չէ, սակայն ափսաստեղերի ավելացման հետ կարող է նոր հնչեղություն ստանալ՝ հեռախոսացանցի բաժանորդներին հիշեցնելով «ժամանակը ոսկի է» մոռացված թեզը:

Մյուս կողմից, եթե հեռախոսային օփումներն այնքան թանկանան, որ հեռախոսազրույցների ծախսատարությունը գերազանցի ընկերներին եւ բարեկամներին այցելելու գործընթացի «ինքնարժեքը», ապա կարող է վերականգնվել փոխադարձ այցելությունների խախտված ավանդույթը՝ լրացնելով մարդկային փոխհարաբերություններում առաջացած աննրեելի բացը, նույնիսկ դատարկ ծեռով հյուր գնալով կամ հյուրասիրությունը մի բաժակ սուրճով սահմանափակելու պայմանով: Այնպես որ, չի բացառվում, որ Արմենտելը, կամ որ նույնն է, հունական OTE ընկերությունը, առայժմ հետաձգված «սակագնային կարգավորումը» նախաձեռնելով, առաջնորդվել է բացառապես մեր շահերով...

Սա՝ կես-կատակ, իսկ լուրջ խոսելու դեպքում ստիպված ենք վերհիշել, որ հեռախոսավարձին առնչվող սակագնային նորամուծությունը հիմնավորվում էր առաջին հերթին արդիական հեռախոսակապի ապահովման «գերխնդրով»: OTE-ի ղեկավարներն իրենց անդրանիկ հայաստանյան ասուլիսում, մասնավորապես, խոստացան ոչ հեռու ապագայում «հեռախոսաֆիկացնել» գյուղական շրջանները: Հարց է առաջանում, սակայն. գյուղացին ի վիճակի՞ է օգտվել այդ «հեռախոսաֆիկացման» խոստումնալից պտուղներից: Երեւանցիները, գյումրեցիները, մյուսները կարո՞ղ են վճարել այդ, թեկուզեւ տեխնիկայի վերջին ճիչով արդիականացված հեռախոսացանցի ծառայությունների դիմաց: Թե՞ հեռախոսն էլ դառնալու է շեղության առարկա, ինչպես շեղության առարկա են դարձել «երկու ծեռով լողանալու», ինքնաթիռով ըստ պահանջի եւ անհրաժեշտության տեղաշարժվելու, բնակարանները ժամանակ առ ժամանակ վերանորոգելու, տախտակներ ծառայությունից օգտվելու եւ այլ «վնասակար» սովորություններ:

Անհեթեթություն կլիներ պնդել, թե հեռախոսացանցը կամ, ասենք, էներգետիկ համակարգը չպետք է բարենորոգվեն: Տեխնիկական վերազինումն, անշուշտ, անվիճելի անհրաժեշտություններից է: Սակայն մի՞թե սոցիալական բեռնեցող մեր հայրենակիցների միտքը: Սոցիալական ծանր կացությունն արդեն իսկ, ինչպես հայտնի է, սահմանափակել է ընկերներին եւ բարեկամներին այցելելու մարդկանց ցանկությունն ու հնարավորությունը՝ ոչ միայն տրանսպորտային դժվարությունների (քաղաքի մի ծայրից մյուսը գնալ-գալու ծախսերն անգամ անլուծելի խնդիր են շատերի համար), այլեւ հյուր գնալու եւ հյուր ընդունելու հայկական չափանիշների հետեւանքով: Իրեն հարգող ո՞ր հայը դատարկ ծեռով հյուր կգնա ընկերոջը կամ ազգականին, կամ ո՞ր հայը ընկերոջը կամ ազգականին հյուրընկալելով, կսահմանափակվի մի բաժակ սուրճ կամ թեյ մատուցելով: Պատասխանը հայտնի է, ուստիեւ մարդկանց ուղղակի օփումները բնական ճանապարհով փոխարինվում են անուղղակի (հեռախոսային) օփումներով: Կենցաղային եւ սոցիալական հոգսերի ընտրանին էականորեն սահմանափակում է նաեւ հայերիս մշակութային հետաքրքրությունների շրջանակը: Կինոթատրոնները, եթե սրճարանների, մեքենաների պահեստամասերի վաճառքի կետերի կամ տոնավաճառների չեն վերածվել, սակավ այցելուներ ունեն, թատերական ներկայացումները եւ համերգները, որոշ երջանիկ բացառություններով, ընթանում են կիսով չափ դատարկ դահլիճներում: Այստեղից՝ հեռախոսային երկարատեւ խոսակցությունների պրակտիկան եւ հեռախոսացանցի համապատասխանաբար ծանրաբեռ ափսաստանը՝ տրանից բխող հետեւանքներով (խոսքը հեռախոսացանցից օգտվելու, մեղմ ասած, դժվարության մասին է):

Հիմա Արմենտելն, ըստ էության, պատասխան կտրել Հայաստանի քաղաքացիների մեծ մասին «կյանքի

ունեցող մեր հայրենակիցների միտքը: Սոցիալական ծանր կացությունն արդեն իսկ, ինչպես հայտնի է, սահմանափակել է ընկերներին եւ բարեկամներին այցելելու մարդկանց ցանկությունն ու հնարավորությունը՝ ոչ միայն տրանսպորտային դժվարությունների (քաղաքի մի ծայրից մյուսը գնալ-գալու ծախսերն անգամ անլուծելի խնդիր են շատերի համար), այլեւ հյուր գնալու եւ հյուր ընդունելու հայկական չափանիշների հետեւանքով: Իրեն հարգող ո՞ր հայը դատարկ ծեռով հյուր կգնա ընկերոջը կամ ազգականին, կամ ո՞ր հայը ընկերոջը կամ ազգականին հյուրընկալելով, կսահմանափակվի մի բաժակ սուրճ կամ թեյ մատուցելով: Պատասխանը հայտնի է, ուստիեւ մարդկանց ուղղակի օփումները բնական ճանապարհով փոխարինվում են անուղղակի (հեռախոսային) օփումներով: Կենցաղային եւ սոցիալական հոգսերի ընտրանին էականորեն սահմանափակում է նաեւ հայերիս մշակութային հետաքրքրությունների շրջանակը: Կինոթատրոնները, եթե սրճարանների, մեքենաների պահեստամասերի վաճառքի կետերի կամ տոնավաճառների չեն վերածվել, սակավ այցելուներ ունեն, թատերական ներկայացումները եւ համերգները, որոշ երջանիկ բացառություններով, ընթանում են կիսով չափ դատարկ դահլիճներում: Այստեղից՝ հեռախոսային երկարատեւ խոսակցությունների պրակտիկան եւ հեռախոսացանցի համապատասխանաբար ծանրաբեռ ափսաստանը՝ տրանից բխող հետեւանքներով (խոսքը հեռախոսացանցից օգտվելու, մեղմ ասած, դժվարության մասին է):

Հիմա Արմենտելն, ըստ էության, պատասխան կտրել Հայաստանի քաղաքացիների մեծ մասին «կյանքի ուղղակի դժվարությունների (քաղաքի մի ծայրից մյուսը գնալ-գալու ծախսերն անգամ անլուծելի խնդիր են շատերի համար), այլեւ հյուր գնալու եւ հյուր ընդունելու հայկական չափանիշների հետեւանքով: Իրեն հարգող ո՞ր հայը դատարկ ծեռով հյուր կգնա ընկերոջը կամ ազգականին, կամ ո՞ր հայը ընկերոջը կամ ազգականին հյուրընկալելով, կսահմանափակվի մի բաժակ սուրճ կամ թեյ մատուցելով: Պատասխանը հայտնի է, ուստիեւ մարդկանց ուղղակի օփումները բնական ճանապարհով փոխարինվում են անուղղակի (հեռախոսային) օփումներով: Կենցաղային եւ սոցիալական հոգսերի ընտրանին էականորեն սահմանափակում է նաեւ հայերիս մշակութային հետաքրքրությունների շրջանակը: Կինոթատրոնները, եթե սրճարանների, մեքենաների պահեստամասերի վաճառքի կետերի կամ տոնավաճառների չեն վերածվել, սակավ այցելուներ ունեն, թատերական ներկայացումները եւ համերգները, որոշ երջանիկ բացառություններով, ընթանում են կիսով չափ դատարկ դահլիճներում: Այստեղից՝ հեռախոսային երկարատեւ խոսակցությունների պրակտիկան եւ հեռախոսացանցի համապատասխանաբար ծանրաբեռ ափսաստանը՝ տրանից բխող հետեւանքներով (խոսքը հեռախոսացանցից օգտվելու, մեղմ ասած, դժվարության մասին է):

Հիմա Արմենտելն, ըստ էության, պատասխան կտրել Հայաստանի քաղաքացիների մեծ մասին «կյանքի

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Գնումների սեմինար վարկ ստացողների եւ իրացնողների համար

Հայաստանում Համաշխարհային բանկի գրասենյակը հունվարի 18-ին հրավիրել էր ինքգծյա ափսաստանային սեմինար՝ ՀՀ կառավարության, տարբեր գերատեսչությունների ֆինանսական ներկայացուցիչների մասնակցությամբ: Համաշխարհային բանկի մշակման ներկայացուցիչ Օուլեթ Սաադաթը բացման խոսքում նշեց, որ բանկային ծրագրերի որոշ մասը ֆինանսավորության է ենթարկվել, որը վարկային պայմանագրերը խախտելու հետեւանք է եւ սեմինարի միջոցով նպատակ ունեն հստակեցնել փոխհարաբերությունները վարկ ստացողների ու իրականացնողների հետ:

Սեմինարի ափսաստանները ղեկավարում է Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի գնումների գծով գլխավոր մասնագետ Սունիլ Բհատչարիան: Նա ափսաստանն սկսեց Համաշխարհային բանկի կառուցվածքը ներկաներին բացատրելով, գտնելով, որ այն կօգնի վարկային պայմանագրերը ճիշտ ընկալելուն: Պրն Բհատչարիան իր ասածների 40 տոկոսի յուրացումն արդեն իսկ մեծ ծեռքբերում համարեց՝ ներկաներին հանգստացնելով, թե միեւնույն է, հինգ օրում ամեն ինչ չեն յուրացնի: Ինչն, օրինակ, 16 տարի անդամակցում է Համաշխարհային բանկին, սակայն դեռեւս իրեն ամենագիտակ չի համարում:

Նշենք, որ 93 թ. մարտից մինչեւ օրս Հայաստանը Համաշխարհային բանկից 487 մլն դոլարի վարկ է ստացել՝ 18 վարկային ծրագրերի դիմաց, որոնց մասին վարկերի ծեռքբերման գլխավոր մասնագետը հայտնեց, թե ինքներդ եք հասատել համաշխարհային բանկի ուղեցույցները:

Ս. Պ.

Քաղաքական նոր միավորում՝ «Հայ արիական բռունցք»

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայոց ազգային բանակը եւ Հայ արիական-ցեղապաշտական կուսակցությունը հունվարի 15-ին համատեղ հռչակագիր են ստորագրել, որով, «համախմբվելով հայկականության եւ արիականության գաղափարների շուրջ», հիմնադրել են «Հայ արիական բռունցք» քաղաքական միավորումը:

Միավորման ստեղծումը նախաձեռնողները հիմնավորում են Հայաստանի հետագա զարգացման համար ազգային գաղափարախոսություն որդեգրելու կարեւորությամբ, ազգի մտավոր ներուժը, ազգայնականներին մեկ միասնական՝ ազգային գաղափարաբանության շուրջը միավորելու անհրաժեշտությամբ, ինչպես նաեւ՝ «առաջնորդվելով Հայոց պետականության ամրապնդման եւ ամբողջականության վերականգնման հրամայականով»:

Հռչակագիրը ստորագրված է ՀԱԲ-ի գլխավոր հրամանատար, Ռազմական խորհրդի նախագահ Ռազմիկ Վասիլյանի եւ Հայ արիական-ցեղապաշտական կուսակցության նախագահ Ա. Ավետիսյանի կողմից:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երեքունի համայնքի ՀՈՒԼԿ «Եսայի Յաղուտյան» վետերան ազատամարտիկների ակումբը եւ ակումբի վարչությունն իրենց խորը ցավակցությունն են հայտնում ակումբի անդամ Սիրանուշ Ասատրյանին՝ նրա սիրելի մոր մահվան կապակցությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

Կոմկուսը գլորում է ձնագունդը

ԵՐԵՎԱՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արդեն տեղեկացրել ենք, որ հունվարի 13-ից սկսած Հայաստանի կոմկուսի (ՀԿԿ) Երեւանի քաղկոմի գլխավորությամբ ամենօրյա բողոքի ցույցեր են տեղի ունենում ՀՀ կառավարության շենքի մոտ: Պահանջը մեկն է՝ սոցիալ-տնտեսական կուրսի արմատական փոփոխություն, իշխանությունների հրաժարական:

Հունվարի 18-ին կոմկուսն ընտրեց պայքարի այլ մարտավարություն: Այսուհետ դարձյալ ժամը 14-ին կառավարության շենքի մոտ հավաքվելով՝ ցուցարարները կգնան Ստեփան Շահումյանի արձանի մոտ՝ անժամկետ նստացույցի: «Մենք այլեւս անելիք չունենք կառավարության շենքի մոտ», ասաց ՀԿԿ Երեւանի քաղկոմի առաջին քարտուղար Յուրի Մանուկյանը: Նա տեղեկացրեց, որ վարչապետ Արմեն Դարբինյանը հունվարի 17-ին կոմկուսի ղեկավարներին հրավիրել էր զրույցի, սակայն վերջիններս մերժել են հրավերը:

Կոմկուսը պատրաստվում է հաջորդ շաբաթ համաքաղաքային, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համազգային հանրահավաք հրավիրել վերոհիշյալ պահանջով: Սրանով հանդերձ, ՀԿԿ-ն այսուհետեւ պատասխանատվություն չի վերցնում ցույցերի ընթացքում եւ ընդհանրապես հակասահմանադրական հնարավոր դեպքերի համար: Յու. Մանուկյանի մեկնաբանությամբ, ժողովրդի համբերության բաժակն արդեն լցվել է, եւ նրան այսօր այնքան չեն հուզում Արմենտելն ու էլեկտրաէներգիան, ժողովրդին այսօր երաշխիք է պետք՝ հաջորդ սերունդն ապրելո՞ւ է Հայաստանում, թե՞ ոչ. ի՞նչ պայմաններում է գոյատեւելու:

Կառավարության շենքի մոտից Ս. Շահումյանի արձանի մոտ տեղափոխվելու ճանապարհին քաղկոմի առաջին քարտուղարի ստորագրությամբ դիմում հանձնվեց ՀՀ գլխավոր դատախազին: Փաստաթղթում ասվում է, թե «Վերջին օրերի ՀՀ իշխանությունների գործողությունը, էլեկտրաէներգիայի սակագների եւ հեռախոսավարձի կտրուկ բարձրացումների կապակցությամբ, հնարավոր չի դարձնում ցույցերի հետագա խաղաղ շարունակությունը»: Կոմկուսը դատախազությանն առաջարկում է «պարզել Արմենտելի գործարքի օրինականությունը, անհրաժեշտության դեպքում, քրեական պատասխանատվության ենթարկել հեղինակներին, ինչպես նաեւ էներգետիկայի հանձնաժողովին, որի եզրակացությունը՝ 1 կվտ-ի արժեքը 25 դրամ հաշվարկը, ըստ ճարտարագիտական ինստիտուտի էներգետիկայի ամբիոնի գիտնական-մասնագետների եզրակացության, լիովին անհիմն է եւ չի բխում ժողովրդի շահերից»:

Յու. Մանուկյանը համոզված է, որ այս նստացույցը եւ նախապատրաստվող հանրահավաքն անհետեւանք չեն անցնի. «Սա այն ձնագունդն է, որը կմեծանա, եւ ոչ մի իշխանություն չի դիմանա սրան», ասաց նա:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh
համակարգչային շարուածք «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

տեղական

«Երկրապահ»-«Հանրապետականի» միացյալ առաջնեկ համագումարին ՀՀ քաղաքական շրջանակներում սպասում են կրավորական լարվածությամբ: Մեր իշխանական, ինչպես նաեւ իշխանության ձգտող ուժերի դաշտը նման է սպասողականության մեջ սեղմված զսպանակի, որ այս-այս է՝ պիտի բացվի, բայց ինչ ուժգնությամբ եւ ինչ ուղղությամբ, դեռ չի կողմնորոշվում: Նորացված «Հանրապետականի» համագումարը պետք է կայանար դեռ սեպտեմբերի 25-26-ին, սակայն հետաձգվեց տեխնիկական պատճառաբանությամբ՝ Աժ արտահերթ նիստեր, այն պարագայում, երբ «Հանրապետականի» եւ «Երկրապահի» հիմնական մասը պատգամավորներ են: Հունվարի 29-30-ին «Հանրապետականը» կանցկացնի իր համագումարը. «Ազգը» դիմեց «Հանրապետական» կուսակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանին՝ պարզաբանելու համագումարի օրակարգը եւ հիմնական ընթացքը:

Մանկական մի խաղալիք կա՝ խորհրդավոր արկղիկ, որի կափարիչը բացելիս այնտեղից դուրս է թռչում զսպանակի վրա տեղադրված կամ ավեստաբեր հրեշակը, կամ սատանան: Իսկ սատանան երբեմն այնքան սարսափելի չէ, որքան նրան պատկերում են: «Հունվարի 29-30-ին կգումարվի ՀՀ համագումարը հետեւյալ օրակարգով. ա) ծրագրային եւ կանոնադրական փոփոխությունների հաստատում, կուսակցության խորհրդի կազմի ընտրություն: Այսինքն՝ այս համագումարը լինելու է միայն կազմակերպական հարցերի համագումար», ասաց Անդրանիկ Մարգարյանը՝ չհապաղելով ավելացնել, որ ընտրություններից առաջ ՀՀԿ-ն կամ կիրավիրի արտահերթ համագումար, կամ կկազմակերպի խորհրդի ընդլայնված նիստ, որին կմասնակցեն մարզային եւ տարածքային բոլոր կազմակերպությունների ղեկավարները. «Ընտրություններից առաջ մեր դիրքորոշումը կհստակեցնենք՝ եւ նախընտրական ծրագրահենքը, եւ պատգամավորների ցուցակների հաստատումը, եւ քաղաքական ուժերի հետ փոխհարաբերությունները, համագործակցության ձեւերը: Իսկ այս համագումարում նման հարցեր չեն քննարկվի», ի մի բերեց Ա. Մարգարյանը:

Լիդերը պետք է իր վերաբերմունքն արտահայտի

Մեր այն հարցին, թե նախատեսվո՞ւմ է արդյոք կազմակերպական այս համագումարում պատգամավորության նախարար եւ նոր քաղաքական շարժման առաջնորդ Վազգեն Սարգսյանի ելույթը, Անդրանիկ Մարգարյանը պատասխանեց. «Հավանական է, քանի որ նա շարժման լիդերն է, կուսակցությունը մասնակցում է այդ շարժմանը, ընդունում է Վազգեն Սարգսյանին որպես շարժման լիդերի, եւ լիդերը պետք է իր վերաբերմունքն արտահայտի համագումարին»: Համագումարը կընդունի բանաձեւ, ուր կարտահայտի իր առայժմ ընդհանրական գնահատականը քաղաքական իրավիճակի մասին՝ մանրամասները հիշեցնենք հին խոսք. «Նման զնման գտանք»:

Անդրանիկ Մարգարյանը բացառեց տարբեր ցուցակների առկայությունը. «Սկզբից ասեմ՝ նման ցուցակներ գոյություն չունեն: Եվ երբ դրանք կկազմվեն, ապա կլինի մեկ ցուցակ: Երբեմ տարբեր ցուցակներ չեն լինի, եւ արհեստական իրար չեն միացվի: Վազգեն Սարգսյանը մեր շարժման լիդերն է եւ իր վճռորոշ դերը կունենա այդ ցուցակների կազմման գործում: Բայց դա նաեւ կուսակցության խնդիրն է, եւ ցանկացած կուսակցության մեջ էլ այդ գործընթացների ժամանակ տարակարծություններ լինում են: Բայց ես բացառում եմ մեզ մոտ սրված հարաբերություններ եւ նեղացած մարդկանց: Հենց սկզբից դրված էր այն սկզբունքը, որ կուսակցության մեջ ընդգրկում են՝ հաշվի առնելով տվյալ մարդու քաղաքականությամբ զբաղվելու ունակությունները անցյալում եւ ներկայում: Մեր կուսակցության եւ նախկին անդամները եւ նոր համալրած մարդիկ, երբ մտնում էին կուսակցություն, ապա երբեմ խնդիր չեն դրել պատգամավոր դառնալու: Մենք չենք սակարկել անդամագրելու ժամանակ: Դա կորոշի կուսակցության ղեկավար մարմինը», վճռական ի մի բերեց ՀՀԿ նախագահը:

Հասարակական-քաղաքական շրջանակներում ակնկալիք կա, որ նորաստեղծ այս շարժումը, նվազ չափով՝ կուսակցությունը կարողանան համախմբել եթե ոչ ներսում, ապա իրենց շուրջ Հայաստանի քաղաքական դեմքերի մի նոր սերունդ: «Ղարաբաղ» կոմիտեից հետո մեր օլիմպոսում նոր դեմքեր չկան: Այսօր հին դեմքերի երակներում կամ արդեն ծերացած արյունը չի խաղում, կամ նրանք արդեն վարկաբեկված են: Մեր հարցին պատասխանելով՝ Անդրանիկ Մարգարյանը հստակեցրեց այն սկզբունքները, որոնցով իրենք փորձելու են ձեւավորել թե նորընտիր կուսակցական խորհուրդը, թե պատգամավորական ցուցակները. «Մեզ համար կարեւոր է, որ այն մարդիկ, ովքեր ապագայում կընտրվեն կուսակցության խորհրդում, կլինեն պատգամավորության թեկնածու եւ ընդհանրապես կուսակցությունը կներկայացնեն քաղաքական դաշտում, կունենան ժողովրդի եւ մյուս քաղաքական ուժերի վստահությունը: Եվ մինչ այժմ իրենց ոչնչով արատավորած չլինեն: Դրա նպատակն այն է, որ ապագա քաղաքական գործընթացներում մենք ունենանք վստահության քվե: Եվ կարեւորը ոչ միայն վստահությունն է, այլեւ պատասխանատվություն վերցնելու ունակությունը: Կան մարդիկ, որոնք վստահելի են, բայց չեն կարողանում պատասխանատվություն ստանձնել: Նրանք լոքեմ է նայեն, թե երկու կամ երեք հոգի՝ ինչ կասեն, եւ ըստ այդմ՝ գործեն, այլ պետք է խնդիրներ դնեն եւ լուծեն դրանք: Մեզ պետք են ոչ միայն կատարողներ», անկեղծացավ Ա. Մարգարյանը:

Կարելի է ենթադրել, որ կուսակցությունը կամ շարժումը փորձում է զերծ մնալ ՀՀՇ սխալներից, երբ Հայոց համազգային շարժումը վերածվեց կուսակցության, ամբողջովին ներթափանցվեց հարմարվողականներով, որոնք վճռական պահին հեռացան կուսակցության նախապես հռչակված նպատակներից՝ ասիճանաբար ՀՀՇ-ն վերածելով իշխանային եւ ուրիշի կողմից թելադրված լուծումներ իրագործող հիմնարկի:

«Առաջին հերթին, իհարկե, Դաշնակցության հետ»

ՀՅԴ ԳՄ քաղաքական ներկայացուցչ, Ռոբերտ Քոչարյանի խորհրդական Վահան Հովհաննիսյանը, պատասխանելով «Ազգի» հարցին, նորաստեղծ «Հանրապետականը» համարել է իրենց պոտենցիալ գործընկերը՝ միաժամանակ նշելով, թե այս կուսակցության մեջ «Երկրապահին» ասիճանաբար կորցնելու է իր դերը: Նույն հարցն ուղղեցինք Անդրանիկ Մարգարյանին: Նա երկրորդ ձեւակերպումը չընդունեց. «Կուսակցության մեջ չի կարելի տարանջատել «Երկրապահ» եւ «Հանրապետական», մենք արդեն մեկ մարմին ենք: «Հանրապետականը» ԵԿՄ քաղաքականացված մասն է: Ինչ վերաբերում է ՀՅԴ-ին, ապա մենք այսօր, իհարկե, դեռ չենք որոշել՝ նախընտրական դաշինք կկազմե՞նք, թե՞ ոչ, բայց ես համաձայն եմ Վահան Հովհաննիսյանին, որ մենք ընդհանրություններ շատ ունենք, եւ անկախ նախընտրական դաշինից, կհամագործակցենք կուսակցությունների՝ առաջին հերթին, իհարկե, Դաշնակցության հետ»: Ժողովրդական կուսակցության մասին Անդրանիկ Մարգարյանը խուսափեց մանրամասներ հրապարակելուց՝ նշելով, թե հանդիպումներ եւ բանակցություններ վարում են բոլոր կուսակցությունների հետ:

Բայց նաեւ կառավարության

Պատասխանելով մեր հարցին, թե կառավարության հանդեպ ինչպիսին է «Հանրապետականի» դիրքորոշումը, Անդրանիկ Մարգարյանն արձանագրեց. «Բոլոր դեպքերում կառավարությունն արտահայտում է տնտեսական զարգացումների հանդեպ մեր վերաբերմունքը: Մենք կառավարության եւ վարչապետի հանդեպ անվստահության խնդիր չունենք: Մենք նրանց համարում ենք մեր մեկ թիմը: Հավանական է՝ խորհրդարանական նոր ընտրություններից հետո առաջանա կառավարության կազմի փոփոխության խնդիր, բայց ամբողջ կառավարության գործունեությունն այսօր արտահայտում է նախագահի գիծը: Մենք գտնվում ենք նույն ճամբարում, ունենք նույն քաղաքական շահերը»:

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Այս համագումարը կլինի զուտ կազմակերպական»

Ոմանց հուսախաբ արեց Անդրանիկ Մարգարյանը

Ցուցակները որպես գայթակղություն

Թեեւ Անդրանիկ Մարգարյանը հավաստեց, որ համագումարը զուտ կազմակերպական է, սակայն այսօր արդեն քաղաքական շրջանակներից պնդումներ են հնչում, թե Վազգեն Սարգսյանը, «Երկրապահը» եւ «Հանրապետականը» կազմել են ընտրական առանձին ցուցակներ, որոնք չեն համաձայնեցվում միմյանց: Իսկ դա նշանակում է շարժման լիդերի եւ իր շրջապատի միջեւ տարաձայնությունների առաջին նշան: Հիշեցնենք, որ հայաստանյան քաղաքական պատմության մեջ արդեն ավանդույթ կա՝ շրջապատի կողմից առաջնորդներին մեկուսացնելու, եւ ապա՝ անկման հասցնելու: Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերաբերյալ սովորաբար միշտ ասում են, թե նրան մեկուսացրեց եւ ապա խորթացրեց իրականությունից իր իսկ մերձավոր շրջապատը: Թեեւ արդարության դեմ չմեղանչելու համար թողնելով ընտրությունների նախօրեին, ըստ ամենայնի՝ կուսակցության նորընտիր խորհրդի քաղաքական հոտառությանը եւ վճռականությանը: Անդրանիկ Մարգարյանը նշեց, որ կուսակցության խորհրդի վերջնական թիվը կհաստատվի համագումարում, մոտավորապես կունենա 25 անդամ: Համագումարում ընտրված խորհուրդը կընտրի իր նախագահին:

Քաղաքական-քաղաքական

Թեեւ Անդրանիկ Մարգարյանը հավաստեց, որ համագումարը զուտ կազմակերպական է, սակայն այսօր արդեն քաղաքական շրջանակներից պնդումներ են հնչում, թե Վազգեն Սարգսյանը, «Երկրապահը» եւ «Հանրապետականը» կազմել են ընտրական առանձին ցուցակներ, որոնք չեն համաձայնեցվում միմյանց: Իսկ դա նշանակում է շարժման լիդերի եւ իր շրջապատի միջեւ տարաձայնությունների առաջին նշան: Հիշեցնենք, որ հայաստանյան քաղաքական պատմության մեջ արդեն ավանդույթ կա՝ շրջապատի կողմից առաջնորդներին մեկուսացնելու, եւ ապա՝ անկման հասցնելու: Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի վերաբերյալ սովորաբար միշտ ասում են, թե նրան մեկուսացրեց եւ ապա խորթացրեց իրականությունից իր իսկ մերձավոր շրջապատը: Թեեւ արդարության դեմ չմեղանչելու համար

վճռորդի

Վաճառականների միության նախագահության հայտարարությունը

1998 թ. տարեվերջին ՀՀ կառավարությունը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման մի շարք միջոցառումների մասին» 1998 թ. մայիսի 15-ի թիվ 298 որոշման մեջ եւ այդ որոշմամբ տրված հանձնարարականների կատարման գործում տեղ գտած բացահայտ թերացումների պատճառով հասարակության լայն շրջանակներում եւ ՀՀ Ազգային ժողովում առաջացած լուրջ դիմադրության ճնշման տակ, սխալված եղավ վերանայել իր սկզբնական դիրքորոշումների մի մասը: Մասնավորապես նշանակվեց ՀԴՄ-ների ներդրման նոր ժամկետ՝ 1999 թ. փետրվարի 1-ը:

Բացի այդ, այս տարեսկզբից պաշտոնական շրջանակները զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար հավաստիացնում են՝ թե ՀԴՄ-ների ներդրման իրավական դաշտն ամբողջապես պատրաստ է:

Այլ է վիճակը իրականում.

Դեռեւս պաշտոնապես հրապարակված չեն, այսինքն օրինականորեն ուժի մեջ չեն մտել ՀԴՄ-ների տեխնիկական սպասարկում եւ նորոգում իրականացնող կենտրոնների պետական գրանցման եւ լիցենզիայի տալու կարգերը:

Իսկ ինչ վերաբերում է 1998 թ. դեկտեմբերի 28-ին հասարակայնությանը մատչելի դարձած, սակայն 1998 թ. դեկտեմբերի 21-ով թվագրված ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի թիվ 15-ում տպագրված ՀԴՄ-ների գրանցման կարգին եւ շահագործման կանոններին, ապա դրանցում անորոշություններն ու անկատարություններն այնքան շատ են, որ ավելի քան ակնհայտ է 6 ամիս շարունակ այդ փաստաթղթերը մշակած հեղինակների գերխնդիրը՝ ամեն գնով պահպանել պղտոր ջրում ձուկ որսալու իրենց հնարավորությունները:

Եվ, եթե ավելացնենք նաեւ, որ պետական պաշտոնյաներից եւ ոչ մեկը այդպես էլ չպատժվեց ՀԴՄ-ների տխրահռչակ, ՀՀ Սահմանադրությունն ու ՀՀ օրենսդիր մարմինը բացարձակորեն արհամարող գովազդի համար, ապա պարզ է դառնում, որ անկախ վերջին իշխանափոխությունից, հասարակայնությունը այսուհետ էլ գործ է ունենալու լավ կազմակերպված բյուրոկրատական կառույցի հետ, որի անդամները պետականի եւ հասարակականի սնվման տակ շարունակելու են պաշտպանել իրենց գրպանի ու աթոռի պահպանման շահերը:

Վաճառականների միությունը հայտնում է իր վճռականությունը պայքարելու հանուն Հայաստանի տնտեսական հզորացման եւ հայրենիքում հայ ժողովրդի ազատ ու արժանապատիվ ապրելու իրական հնարավորությունների ստեղծման: Միաժամանակ

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

այն հասարակական, արհմիութենական կազմակերպություններին եւ բոլոր նրանց, ում համար իրոք թանկ են նշված արժեքները, համատեղել իրենց ջանքերն ու հնարավորությունները՝ վերջ դնելու այդ խնդիրների կյանքի կոչման հիմնական արգելք հանդիսացող բյուրոկրատական ապարատի անպատժի ամենաթողությանը:

«Հայաստան» հիմնադրամի աջակցությամբ

Անցած շաբաթ օրը կարճատեւ այցով Վանաձորում էին «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Վահան Տեր-Պետրոսյանը, փոխտնօրեն Սամվել Ենգոյանը եւ ուրիշներ: Նրանք մարզպետ Հենրիկ Քոչինյանի, փոխմարզպետ Դավիթ Լոքյանի եւ այլոց ուղեկցությամբ եղան «Գուգարք» համաբուժարանում, որի վերականգնման խնդիրը հրատապ է, քանզի հիմգործարանի վերագործարկման դեպքում 1000-ից ավելի աշխատողների բուժպատարկման հիմնահարց կառաջանա: Հիմնադրամի ղեկավարները եղան նաեւ թիվ 1 դպրոցի նախկին շենքում, որի ամրացման համար հատուկ ծրագիր են մշակվել: Վ. Տեր-Պետրոսյանը հայտնեց, որ միջոցներ են ձեռնարկվում նաեւ թիվ 3 եւ 4 դպրոցների վերականգնման համար: Վանաձորից հյուրերը մեկնեցին Սոչիտակ՝ մասնակցելու բնակելի երկու շենքերի հիմնադրման արարողությանը:

Լոռու մարզը եւս ընդգրկվեց առողջապահության պահպանման զարգացման ծրագրում

Համաշխարհային բանկը 10 մլն դոլար է հատկացրել Հայաստանում առողջապահության զարգացման ծրագիր իրականացնելու համար: Օրերս Վանաձորի քաղաքապետարանի դահլիճում տեղի ունեցավ սեմինար՝ նվիրված Լոռու մարզում այդ ծրագրի իրականացմանը: Սեմինարի նպատակն էր մարզի ղեկավարներին եւ առողջապահության բնագավառի աշխատողներին ծանոթացնել հիշյալ ծրագրով նախատեսված սպասվող բարեփոխումներին, առողջապահության առաջնային պահպանման զարգացման ծրագրի (ԱԱՊԶԾ) խնդիրներին: Մարզպետարանի առողջապահության վարչության պետ Յուրի Բարլումյանը իր խոսքում մտահոգություն հայտնեց, որ վերջին տարիներին մարզում նվազել է ծնելիությունը, աճել մահացությունը, հատկապես աճել են քրոնիկական հիվանդությունները: Օրինակ, մարզում այսօր 800 տուբերկուլյոզով հիվանդ կա: Վերջին տարիներին միայն Վանաձորում այդ հիվանդությունն աճել է 4 անգամ: ԱԱՊԶԾ ենթաստենյակի ղեկավար Լիանա Հովակիմյանը տեղեկացրեց, որ համայնքներում կստեղծվեն կառավարման խորհուրդներ, որոնք կօգնեն աշխատանքային խմբերին: Բուժհիմնարկներին կտրամադրվեն անհրաժեշտ սարքավորումներ եւ տեխնիկա, դեղամիջոցներ՝ ծրագիրն իրականացնելու համար: Հատուկ ուշադրություն կտրամադրվի նաեւ ընտանեկան բժշկության զարգացմանը:

Մ. Մ.

Վանաձոր

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Կիրառ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանին

Ընտրախախտումների նախօրյակին երջանառության մեջ դրած Ձեր «Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է» շատ բան խոսացող կարգախոսը եւ հատկապես Ղարաբաղյան ազատագրական շարժմանը Ձեր ամենաակտիվ մասնակցությունը հիրավի մեծ հավատ էին ներշնչում, որ վերջապես կունենանք մեր տառապյալ ժողովրդի ծանրագույն վիճակը համեմատաբար արագ թեթեւացնող, վճռական քայլերի դիմող նախագահ: Ահա թե ինչու մեր կազմակերպությունը, այլ կազմակերպությունների հետ, բոլոր ջանքերը գործադրեց օգտակար լինելու Ձեզ՝ ՀՀ նախագահի պատասխանում ընտրվելու համար: Այսպիսով, դուք նաեւ մեր ընտրյալ նախագահն եք եւ շուտով կլրանա մեկ տարին, ինչ այդ պատասխանում եք:

Ցավով նշում ենք, որ մեր սպասելիքները՝ ժողովրդի ծանրագույն վիճակը թեկուզ աննշան չափով թեթեւացնելու բնագավառում, ոչ միայն չեն արդարացվում, այլեւ ավելի ծանրացվում է տարաբնույթ, շինծու հարկային բեռով:

ա) Որքան էլ մեր իշխանությունները փորձեն «հիմնավորել» ջրի, էլեկտրաէներգիայի, հեռախոսի առասպելական չափերի հասնող գների բարձրացումը (էլ չենք նշում բազմաթեւակ այլ հարկերը՝ ինքնաթիռով թռչելու, նոտարական, ավտոմեքենաների գրանցման, բուհեր ընդունվելու համար դիմում գրելու, զանազան տեղեկանքներ վերցնելու համար եւ այլն) միեւնույն է, մեր ժողովրդի ավելի քան 96 տոկոսի համար անընդունելի է, պարոն նախագահ, թե ինչպես կարելի է Ձեր խոսացած 5000 դրամ նվազագույն աշխատավարձի պայմաններում յուրաքանչյուր շնչի համար ամսական մուծել 420 դրամ ջրի վարձ, մեկ կվտ էլեկտրաէներգիայի համար 25 դրամ, հեռախոսի համար արդեն ավելի քան 900 դրամ եւ այլն: Եթե այդ «հիմնավորումները» արվում են վերջերս բարձր իշխանավորների համար սահմանված աշխատավարձերի չափերից ելնելով, ապա, մեղմ ասած, դա բարոյական չէ: Մի՞թե դուք նորմալ եք համարում, որ Ազգային ժողովի աշխատողների համար սահմանվում է ամսական 150-170 հազ. դրամ (այսինքն 300-340 դոլար) աշխատավարձ, իսկ ակադեմիկոսն ու պրոֆեսորը սանում են 15-20 դոլարի չափով աշխատավարձ: Հետեւանքը այն է, որ շարունակվում է կազմալուծվել մեր հասարակության հիմքերից՝ կրթությունն ու գիտությունը:

Անկասկած տեղյակ եք նաեւ, որ հիվանդանոցներում միայն արյան անալիզի համար պահանջում են մուծել մի քանի հազար դրամ, էլ չենք խոսում վիրահատվելու, ծննդաբերելու, բուժվելու համար պահանջվող անհրաժեշտ գումարների մասին: Շատ-շատերը չեն կարողանում ստանալ բժշկական օգնություն, մահացության թիվ շարունակում է արագորեն մեծանալ, բնակչության բնական աճը ընկել է, արտահոսքը ինտենսիվ շարունակվում է:

Պարոն նախագահ, սեփականությունից լրիվ զրկված, տարրական կենսապայմաններ չունեցող բնակչությունից գանձվող եւ օրեցօր ավելացող հարկերով էկոնոմիկա ստեղծել չի լինի: Անհրաժեշտ է տարբերակել «Ձեր կուսակցությունը հանդիսացող տառապյալ ժողովուրդը» այն փոքրաթիվ միլիարդատերերից, որոնք տեր են դարձել համաժողովրդական սեփականության:

Ցանկանում ենք նշել նաեւ, որ ոչ մի քաղաքակիրթ ժողովուրդ իր տնտեսական ու սոցիալական կարեւորագույն բնագավառները չի վաճառի օտարներին, որքան էլ դա տվյալ ժամանակի համար գայթակղիչ լինի: Մասնավորապես, չի կարելի հաշվել այն հանգամանքի հետ, որ մեր հեռախոսային ամբողջ համակարգը վաճառվեց հունական ֆիրմաներից մեկին: Հեռախոսային համակարգը ռազմավարական, սոցիալական հույժ կարեւոր բնագավառ է եւ չի կարելի վստահել օտարերկրյա որեւէ կազմակերպության: Կարծում ենք պիտի չեղյալ հայտարարել Արմենտելի հետ կնքված գործարքը եւ հանրապետության կարի ամբողջ համակարգը վերադարձնել մեր պետությանը, ժողովրդին: Խիստ անհամաձայնություն ենք հայտնում նաեւ Կոնյակի գործարանի, «Արմենիա» հյուրանոցի եւ մյուս կարեւոր օբյեկտների օտարմանը:

բ) Անհասկանալի է, թե ինչու ներկայիս իշխանությունները չեն ցանկանում հստակ, անաչառ գնահատական տալով նախորդ իշխանությունների հանցավոր քաղաքականությանը, ստեղծել հիրավի ժողովրդավարական կարգ ու կանոն բոլոր բնագավառներում: Այսպես կոչված, սեփականաշնորհվել են մի քանի հազար ձեռնարկություններ: Դրանց զգալի մասը կամ առհասարակ չեն գործում, կամ գործում են աննշան հզորությամբ: Մինչդեռ այդ ձեռնարկությունները հսկայական եկամուտ կարող են բերել պետությանը, իսկ եթե չեն բերում (անգործության են մատնված), ապա դրանք պետք է հատուկ հրամանագրով վերադարձնել պետությանը կամ տվեն դրանց իսկական տերերին, որոնք կարող են եկամուտ ստեղծել:

գ) Վերջին ութ տարիներին մեր հանրապետության տնտեսության կազմալուծման հիմնական պատճառը կադրային ոչ ճիշտ քաղաքականությունն է: Ամենուրեք, հատուկ պաշտոնների են նշանակվել ՀՀՇ-ականներ, հաշվի չառնելով նրանց ունակությունները, բարոյական կերպարը: Իսկ ՀՀՇ-ական նախարարը կամ տնօրենը իրենց ամբողջ կառույցը ձեւավորել են «գաղափարակիցներով»: Հետեւանքը լավ պարզ է, կազմալուծվել է ձեռնարկությունների մեծ մասը: Այդ բնագավառում դեռեւս ոչ մի փոփոխություն չի կատարվել: Չթեթեւացվեցին բնագավառների ղեկավարումը կուսակցականացնել: Կադրերի ընտրությունը պետք է կատարել ոչ թե ընկերական, թիմային հատկանիշներով, այլ ելնելով հանրապետության եւ ժողովրդի շահերից: Կադր ընտրելիս պետք է խստագույնս հաշվի առնել անցած ուղին, փորձը, կրթական մակարդակը, բարոյական կերպարը: Քիչ չեն դեպքերը, երբ Ազգային ժողովում ղեկավար պաշտոնյաներին տրված հարցերին հետեւում են շատ հիասթափեցնող մասնագիտական եւ նույնիսկ լեզվական անկարողություններ:

դ) Մեր համազգային գերխնդիրը շարունակում է մնալ Ղարաբաղյան հիմնահարցը: Ղարաբաղյան ազատագրական պայքարի, ԼՂՀ կայացման մեջ Ձեր ծառայություններն անկասկած մեծ են: Սակայն վերջերս նորից աշխուժացած քննարկումներում առաջարկվում է Արցախի հիմնահարցի լուծման մի անհասկանալի տարբերակ, որին Դուք եւս կարծես թե համամիտ եք: Ի՞նչ է նշանակում «Ադրբեջանի ու ԼՂՀ-ի միասնական պետություն» հասկացությունը: Մի՞թե Դուք, որ քաջածանոթ եք Ալիեւի խորամանկություններին (չնայած նա դեմ է այդ գաղափարին), հավատում եք, որ արցախահայությունը Ադրբեջանի հետ նույն պետության կազմում կարող է գոյատեւել: Մեր ժողովրդի համար անհասկանալի է դրա էությունը եւ ուզում ենք հավատալ, որ դա դիվանագիտական խաղ է:

Անհասկանալի են նաեւ այն «փոխզիջումային» առաջարկությունները, որոնք արվում են մեր դիվանագետների կողմից: Մենք լրիվ համամիտ ենք Ղարաբաղյան շարժման այն նշանավոր գործիչների հետ, որոնք զգնում են, որ մենք թուրքերին զիջելու ոչինչ չունենք, մենք մեր ժողովրդի արյան գնով ազատագրել ենք պատմական Արցախի հողերը: Ադրբեջանի ժողովուրդն արդեն 10 տարվա ընթացքում համոզվել է դրանում, եւ մենք ոչ թե նորից միջազգային ասյաններում պետք է առաջ քաշենք ինչ-որ փոխզիջման հարցեր, այլ հակառակը՝ պետք է անընդհատ ներկայացնենք մեր պահանջատիրությունը Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու շրջանների օկուպացված տարածքների վերաբերյալ:

Մենք չպետք է մոռանանք, որ Ադրբեջանի տարածքում թողել ենք մի քանի հարյուր հայկական գյուղեր, որ այնտեղ թողել ենք ավելի քան 100 հազ. բնակարան իրենց կահավորանքով, իսկ խնայդրամարկղներում՝ մի քանի միլիարդ ռուբլի (այն ժամանակվա գներով), որոնք պետք է փոխհատուցվեն Ադրբեջանի կողմից այնպես, ինչպես փոխհատուցել է Հայաստանը ադրբեջանցիներին պատկանող բնակարանների համար:

Ահա տրանք եւ շուրջ 400 հազար բռնագաղթած հայերին հասցված վնասների հատուցումը պետք է դիվանագիտական ճանապարհով մշտապես պահանջել:

Կարծում ենք, որ ՀՀ եւ ԼՂՀ ղեկավարները պետք է Ադրբեջանի ղեկավարությանն ու ժողովրդին ուղղված հատուկ հայտարարությամբ հանդես գան, նշելով, որ մեր ժողովուրդները կողք-կողքի, բարեկամաբար կարող են ապրել, բայց հայկական Արցախ պետությունն ու հազարամյակների պատմություն ունեցող, իր հողի վրա ապրող նրա ժողովրդի գոյատեւումը նորաթուխ Ադրբեջանի կազմում անհնար է պատկերացնել:

«ԱՐՑԱԽ-ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԵՐԳԵՆ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ
Վարչության նախագահ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին եւ արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանին

Մեծարգո գլխավոր դատախազ,
Մեծարգո նախարար

Ինչպես Ձեզ հայտնի եր վաղօրոք, Մշակույթի հայկական ֆոնդը դեկտեմբերի 17-ին իրավապաշտպան կազմակերպությունների եւ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպել եր հավաք՝ լրատվական միջոցների կողմից դատական համակարգի վերաբերյալ հրապարակումները եւ դրանց արձագանքները քննարկելու նպատակով:

Մեր օրերում, երբ կուսակցությունները հասարակության մեջ իրենց տեղը գտնելու նպատակով խաղարկում են բազմաթիվ փաստեր, դատական գործեր, դրանք մեկնաբանելով իրենց կուսակցական շահերի տեսանկյունից, երբ մամուլը կամա թե ակամա դառնում է այդ շահարկումների խոսափողը, երբ չգիտես ում մեղքով խախտվում են օրինականության սահմանագծերը, Մշակույթի հայկական ֆոնդը որոշեց մտավորականների անվանի ներկայացուցիչների մասնակցությամբ անդրադառնալ վերոհիշյալ հարցերին՝ հասարակական ճիշտ կարծիքի ձեւավորման համար:

Ցավոք սրտի, հանդիպման ժամանակ ոչ դատախազությունը, ոչ էլ արդարադատության նախարարությունն իրենց ներկայացուցիչների միջոցով չարձագանքեցին այս կամ այն դատախազի կամ դատավորի վերաբերյալ մամուլում տպագրված քննադատական հոդվածներին: Ավելի ճիշտ՝ նրանք խուսափեցին լսարանից:

Խոսքը վերաբերում է ոչ թե այս կամ այն դատական կամ քննչական սխալին, այլ օրենքի դիտավորյալ խախտումներին, մարդու իրավունքների ակնհայտ ոտնահարումներին: Եթե նույնիսկ մամուլի հրապարակումները սխալ են, քննադատված դատավոր-դատախազները չպետք է լռեն: Հաճախ թվում է, թե նրանց վերադասները թերթ չեն կարդում եւ տեղյակ չեն նման հրապարակումներին: Սակայն դա արդարացման միջոց չի կարող լինել, քանի որ, եթե նրանք անգամ խիստ զբաղվածության պատճառով թերթ չեն կարդում, ապա մեր՝ հարկատուներիս հաշվին պահվող դատական-դատախազական համակարգերը եւ դրանց ստորաբաժանումները ոչ միայն պարտավոր են մամուլ ընթերցել, այլ նաեւ կատարել ծառայողական քննություն, կարգազանցին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարց առաջ քաշելու, կամ էլ հասարակությանը հայտնելու, որ տվյալ դատախազն ու դատավորն արդար են, իսկ հոդվածագիրը զրպարտել է, դնելով հոդվածագրին պատժելու հարցը:

Եթե տվյալ դատախազն ու դատավորը չեն կարող պաշտպանել իրենց իրավունքներն ու արժանապատվությունը, ինչպե՞ս կարող են պաշտպանել պետության ու քաղաքացիներիս շահերը:

Այս հարցերը պարզելու բարի նպատակն էինք հետապնդում հավաքը կազմակերպելիս: Դատախազությանն ու արդարադատության նախարարությանը հնարավորություն էր ընձեռվել հասարակությանը ներկայացնելու իրենց կատարած աշխատանքը՝ ցրելու այս կամ այն դատավոր-դատախազի, քննիչի նկատմամբ եղած մահաբեր հանդուրժողականության, արտոնյալության պատրանքը: Նկատենք, որ հասարակության մեջ իշխում է այն կարծիքը, որ մարդու իրավունքները ոտնահարող դատավորները, դատախազները, քննիչները անպատիժ են մնում, քանի որ նրանք կատարում են վերադասների կամքն ու ցանկությունը, դրա համար էլ նրանց հասցեագրված քննադատական հոդվածները մնում են անպատասխան: Այսինքն լռությունը համաձայնության նշան է: Եթե հասարակական կարծիքը սահմանափակվեր միայն տվյալ դատավորի, դատախազի, քննիչի մասին քննադատությամբ, էլի կարելի էր հանդուրժել: Բայց երբ զանգվածային հրապարակումներն ընդհանրացվում են եւ որակավորվում որպես շահադիտական հովանավորումներ վերեւների կողմից, փաստորեն արդեն գործ ենք ունենում հասարակական կարծիքի հետ, որն արդեն հասցեագրվում է երկրի նախագահին, օրենսդիր մարմնին, կառավարությանը:

Այստեղ է, որ իսկապես մտավորականությունը մտահոգված է, որովհետեւ խարխլվում է պետության եւ իշխանության նկատմամբ եղած հավատը: Հավաքի մասնակից անվանի մտավորականները, գիտնականները՝ ակադեմիկոսներ, պրոֆեսորներ, գրողներ, գեղանկարիչներ, դերասաններ, իրավապաշտպաններ, մտահոգություն հայտնեցին, որ զարմանալիորեն դատաիրավական համակարգին վերաբերող հրապարակումները մնում են անարձագանք:

Հանդիպմանը գրեթե բոլոր թերթերը ներկայացել էին իրենց թղթակիցներով եւ ակնկալում էին, որ կլսեն Ձեր ներկայացուցիչների խոսքը ծեռնարկված միջոցառումների մասին: Մենք չենք կասկածում, որ Դուք նույնպես ամեն ինչ պետք է անեք դատաիրավական համակարգը անպատժելիության հասած անձերից մաքրելու եւ նրանց շուրջը ստեղծված անպատժելիության մթնոլորտը վերացնելու ուղղությամբ: Ցավոք, այդ կարեւոր լսարանը չօգտագործվեց Ձեր կողմից: Ինչո՞ւ...

Այնուամենայնիվ, առաջիկայում մեր հաջորդ հանդիպման ժամանակ կուզեինք իմանալ Ձեր կոնկրետ խոսքը մամուլում հրապարակված քննադատական հոդվածների կապակցությամբ: Մասնավորապես, «Առավոտ» (հուլիսի 11), «Ֆեմիդա» թերթերում (օգոստոսի 5 եւ 10), ԱՐ հեռուստաընկերության ծրագրով (օգոստոսի 16) «Դատարանն անկախ է նաեւ օրենքի՞ց» հրապարակումներում խստորեն քննադատվում էր Ազգի ժողդատավոր Լեւոն Ղազարյանը: Սպանդարյանի տարածքի ժողդատավորին փոխարինելիս նա կայացրել է ակնհայտ ապօրինի վճիռ՝ շարքային ավտոտնակի համար պետությունից 30 միլիոն դրամ բռնագանձելու մասին: Մինչեւ հիմա այդ հրապարակումներն անպատասխան են մնացել:

Կամ, «Առավոտ» թերթում այս տարվա սեպտեմբերի 18-ին «Մի դատիր, որ չդատվես» վերնագրով քննադատական հոդված էր տպագրվել Ազատամարտի տարածքի ժողդատավոր Գոհար Խաչատրյանի մասին, որն ակնհայտ սխալ վճիռ էր կայացրել եկեղեցուց 500 հազար դրամ բռնագանձելու մասին:

«Հայաստանի Հանրապետություն» թերթում մայիսի 29-ին եղավ հրապարակում, որ Սարվան Քալանթարին աշխատանքից ապօրինի ազատելու կապակցությամբ Երեւանի Սպանդարյան տարածքի դատարանը վճիռ է կայացրել նրան աշխատանքում վերականգնելու մասին: Դատարանի բազմաթիվ ահազանգերը, վերադաս եւ հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպան կազմակերպության կոչերը վճիռն ի կատար ածելու մասին արհամարհվում էին բնապահպանության նախարարության հանրապետական պետական տեսչության պետ Ալֆրեդ Կզարքյանի կողմից: Ստիպված «Օգոստոս 23, ազգային դատին» իրավապաշտպան միությունը գրավոր դիմեց ՀՀ գլխավոր դատախազին (հաղորդումը տպագրվել է «Հայաստանի Հանրապետություն» թերթում օգոստոսի 25-ին) տեսչության պետի նկատմամբ քրեական գործ հարուցելու հաղորդմամբ: Համաձայն քրեական դատավարական օրենքի, երեք օրվա ընթացքում պետք է քննարկվեր այդ հարցը եւ որոշում կայացվեր քրեական գործ հարուցելու (կամ չհարուցելու) մասին եւ հաղորդվեր նաեւ մամուլով: Անցել է չորս ամիս, պատասխան չկա:

Մենք բերեցինք երեք օրինակ, որոնցից ամեն մեկը բնորոշում է, թե մեզանում ինչպես կարող է ոտնահարվել ե՛ւ պետության շահը, ե՛ւ եկեղեցու շահը, ե՛ւ մարդու շահը: Իսկ արդյունքում բացասական կարծիք է ձեւավորվում այն երկրի մասին, որտեղ մենք փորձում ենք ստեղծել պետականություն, օրինականություն:

Փետրվարին Մշակույթի հայկական ֆոնդը կազմակերպելու է նմանատիպ նոր հանդիպում: Մեր ժողովրդի եւ պետության իրավական հիմքերն ամրացնելու, երկրում հոգեւոր-մշակութային առողջ մթնոլորտ ստեղծելու, մարդու իրավունքները պաշտպանելու եւ բարոյահոգեբանական հարցերին ճիշտ պատասխան տալու համար մենք կարիք ունենք գործնական համագործակցության, որի ակնկալիքով Ձեզ եմ ուղարկում այս նամակը:

ԱՐԵՎՇԱՏ ԱՎԱԳՅԱՆ
Մշակույթի հայկական ֆոնդի
վարչության նախագահ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Գագիկ Շահբազյան. «Ինչքան շատ ճանաչեն մեզ, այնքան ավելի արժանավոր կլինի մեր ազգային պետական խաղաքականությունը»

Առիթ է եղել գրելու, որ Մոսկվայում Հայաստանի դեսպանությունը տեղի հայերի կողմից բնավ էլ չի ընկալվում որպես «օտար» պետության ներկայացուցչություն: Ավելին, նա դարձել է մոսկվահայության ներքին կյանքի բաղկացուցիչ մասը: Եվ ուշադրությունը նրա գործունեության նկատմամբ սոսկ պարզ հետաքրքրություն չէ, այլ շահագրգիռ վերաբերմունք: Ի՞նչ է անում հայոց դիվանագիտական առաքելությունը հայ-ռուսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ, որը կենսականորեն կարևոր հարց է ռուսաստանցի ամեն մի հայի համար: Այդ նույն շահագրգռությամբ էլ նոր տարվա սկզբին «Ազգի» Մոսկվայի թղթակիցը հարցազրույցի խնդրանքով դիմեց ՌԴ-ում ՀՀ դեսպան Գագիկ Շահբազյանին:

– Դուք դեսպան, մեր հարցազրույցը կուզենայի սկսել առաջին հայացքից ոչ այնքան տեղին մի հարցով: Երբ Եվգենի Պրիմակովը նշանակվեց Ռուսաստանի վարչապետ, Մոսկվայի շատ հայեր այն կարծիքին էին, որ նա հայտնի է իր ոչ այնքան հայանպաստ տրամադրություններով:

– Դատարկ խոսակցություններ են, եւ դրանք ես երբեք լուրջ չեմ ընդունել: Եթե դուք իմանայիք, թե ինչ մակարդակով անցավ Հայաստանի վարչապետ Արմեն Դարբինյանի վերջերս կայացած աշխատանքային այցը Մոսկվայում, ապա Պրիմակովի նկատմամբ կտրվեիք ամենայն հարգանքով: Բոլոր հանդիպումները Պրիմակովի եւ, նրա հանձնարարությամբ, Մասլյուկովի, Իվանովի, Պաստուխովի, Շաղովայանցի հետ անցան ամենաիսկական, ջերմ եւ մտերիմ մթնոլորտում: Չմոռանանք նաեւ, որ անձնական թե պաշտոնական միջավայրում նրան միշտ շրջապատել են բազմաթիվ հայեր: Ի դեպ, նույն ջերմությունն էր տիրում նաեւ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի՝ առաջին փոխվարչապետ Վ. Գուսովի, փոխվարչապետ Վ. Մատվիենկոյի, ԱԳ նախարար Ի. Իվանովի եւ Բ. Պաստուխովի հետ հանդիպումների ժամանակ: Իսկ մեծ հավով ՌԴ վարչապետ Ե. Պրիմակովն առաջին հերթին ռուսերեն է:

– Երբ Ձեզ այստեղ դեսպան նշանակեցին, այն ենթադրությունն արվեց, որ նկատի ունենալով տնտեսական ու վարչական աշխատանքի Ձեր փորձը, Ձեր գործունեության մեջ շեշտը պիտի դրվի ռուս-հայկական տնտեսական կապերի ակտիվացման վրա:

– Ենթադրությունը հեռու չէ իրականությունից: Անցնող տարին վկայում է, որ մեր երկրների տնտեսական հարաբերություններում աշխուժացում է նկատվում: Հատկապես ակտիվ է մեր համագործակցությունը էներգետիկայի բնագավառում: Չնայած սեփական ֆինանսական ծանր պայմաններին, Ռուսաստանը մեզ տրամադրեց մոտ 33 մլն դոլարի միջուկային վառելիք, սարքավորումներ: Դրանով առաջնորդվում է Հայաստանի ԱԷԿ-ի անխափան աշխատանքը եւ հնարավորություն է ստեղծվում Ռուսաստանի մասնագետների օգնությամբ բարձրացնելու ատոմակայանի շահագործման անվտանգության մակարդակը: Հայազգի եւ ռուս շատ գործարարներ արդեն զգալի ներդրումներ են կատարել Հայաստանում. նրանց հետաքրքրում են այստեղի քիմիական արդյունաբերությունը, օգտակար հանածոները, հանքային նյութերը եւ այլն: Վերջերս բավականին լուրջ պայմանագիր կնքվեց 1999-2001 թթ. Հայաստան բնական գազատար մատակարարելու վերաբերյալ: Հեռանկարային ծրագրեր էին իրագործվում բանկային գործի բնագավառում, չնայած ճգնաժամը սառեցրեց դրանք: Առհասարակ անցած տարին այլի էր ընկնում ամենատարբեր մակարդակի եւ բնույթի պատվիրակությունների այցերով Հայաստան: Նշեմ նաեւ, որ 1998 թ. Ռուսաստանի կողմից 8,6 մլն դոլարի մարդասիրական օգնություն է ցույց տրվել մեր պետությանը:

– Փոխշահավետությունից բացի ուրիշ ի՞նչ գործոններ են նպաստում տնտեսական կապերի զարգացմանը:

– Հայաստանում խիստ բարենպաստ պայմաններ են ստեղծված ներդրումների համար, մեր օրենքները բավականին լիբերալ են, ինչն էլ գրավում է գործարար մարդկանց: Շատ կարեւոր է նաեւ այն, որ հայկական կողմն այստեղ ճանաչված է որպես բարեխիղճ ու ճշտապահ գործընկեր, որը տալիս է նաեւ առաջնահերթության կայուն երաշխիքներ: Եվ բնականաբար այս պայմաններում մեր խնդիրն է հնարավորին չափ շատ պրոպագանդել սա:

– Կարելի՞ է ասել, որ այսօր արդեն անհիմն է Մոսկվայի հայերի այն մտավախությունը, որ կարող են Հայաստանում գործ դնել, բայց դրա տերը չմնալ:

– Առ այսօր ինձ հայտնի չէ դժգոհության որեւէ դեպք:

– Դեսպանության մամլո ծառայության լրատվություններից վերջերս տեղեկանում ենք, որ Դուք հաճախ եք այցելում Ռուսաստանի տարածաշրջանները: Ո՞րն է շարժառիթը:

– Ես նշանակված եմ դեսպան Ռուսաստանում եւ ոչ թե Մոսկվայում, մայրաքաղաքում մենք հիմնականում գործ ենք ունենում դաշնային մարմինների հետ, իսկ լինելով տարածաշրջանում, փորձում ենք նպաստել Հայաստանի եւ ռուսաստանյան նահանգների կամ պարզապես երկու երկրների նահանգների միջեւ տնտեսական ու մշակութային կապերի հաստատմանը կամ զարգացմանը: Եթե սկսենք Մոսկվայից ու Մոսկվայի մարզից, ապա նրանց հետ այս տարի արդեն կնքվել են համաձայնագրեր: 1998 թ. եղել ենք նաեւ Սամարայի, Սավերդլովսկի, Ռոստովի մարզերում, Կրասնոյարսկի երկրամասում: Այցելությունները եղել են գործարար ու նպատակային՝ ընդգրկելով այն բնագավառները, որտեղ կարելի է փոխշահավետ համագործակցություն ստեղծել: Տարածաշրջաններում հանդիպումներ ենք ունեցել մարզերի ղեկավարության ու նահանգապետերների հետ: Պարտադիր հանդիպումներ ենք ունեցել տեղի հայ համայնքների հետ: Ի դեպ, շատ հուզիչ էր հանդիպումը Ռոստովի մարզի Մյասնիկովյան շրջանի Չալբր շրջկենտրոնում, ուր մեզ դիմավորելու եկած դպրոցի սաներն ավանի կենտրոնական հրապարակում կազմակերպել էին բատերակնացված բեմականացում ազգային տարազներով ու երաժշտագային գործիքներով: Պիտի ասեմ, որ կան գործիքներով: Պիտի ասեմ, որ Ռուսաստանի մարզերում, խոշոր քաղաքներում ունենք ազգային միավորումներ, որոնք կազմելով Ռուսաստանի ժողովրդի մի մասը, ապրում են նաեւ Հայաստանի կյանքով ու նրա հոգսերով եւ հնարավորության սահմաններում փորձում են օգնել իրենց պատմական հայրենիքին: Հայերի նկատմամբ հարգանք կա որպես ստեղծագործ, արարող ժողովրդի: Մարզի մի շարք ղեկավարներ հարգությամբ էին նշում տեղի նշանավոր հայերին:

– Հայտնի է, որ ինտելեկտուալ գործարար կարողությամբ Ռուսաստանի հայ համայնքների մեջ առանձնանում է Մոսկվայի հայությունը: Բայց մեկ անգամ չի գրվել, որ նա այդպես էլ չի դառնում կազմակերպված միասնական միավոր, ինչպիսին, ասենք, Ռուսաստանի Հրեական կոնգրեսն է: Անշուշտ ճիշտ է այն մտայնությունը, որ դա Մոսկվայի հայերի ներքին գործն է: Բայց մյուս կողմից, նույնիսկ այստեղի հայերն էլ են համոզված, որ առանց Հայաստանի ղեկավարության շահագրգիռ աջակցության սայլը տեղից չի շարժվի: Ի՞նչ չափով եք Դուք առնչվում մոսկվահայության գործերին:

– Միայն ու միայն համայնքի կազմավորման գործընթացին օգտակար լինելու նկատառումներով: Ըստ իս, օբյեկտիվորեն չեմ էլ տեսնում ներքին լուրջ «հակասություններ»:

– Թերեւս ավելի շուտ կարելի է խոսել լիդերների անձնական հավակնությունների մասին:

– Գուցեեւ: Սմիսը մեկ փորձում ենք դեսպանատան հարկի տակ հանդիպումներ ունենալ համայնքի ղեկավար ներկայացուցչի հետ: Զրույցները բարյացակամ են, անբռնազբոսիկ, միշտ չէ, որ ընդհանուր լեզու ենք գտնում, բայց ձգտում ենք դրան: Լավատես եմ, որ ամեն ինչ կհարթվի: Մոսկվայում կան նաեւ բազմաթիվ «մասնավոր» ազդեցիկ հայեր՝ պետական ու հասարակական գործիչներ, գիտնականներ, արվեստագետներ, ձեռներեցներ եւ այլք, որոնք չեն ներգրավված համայնքային կառույցներում, որոնց հետ նույնպես մենք անմիջական կապի մեջ ենք:

– Վերջին շրջանում հայոց մամուլում հրապարակումներ եղան դեսպանության «վատ» աշխատանքի մասին: Բնավ էլ չհավակնելով հանդես գալու դեսպանության շահերի պաշտպանի դերում, այնուհանդերձ հանուն օբյեկտիվության չեմ կարող չասել, որ այդ նյութերում չկան կոնկրետ փաստեր ի վնաս Ձեր գործունեության: Եթե Ձեզ մեղադրեին, որ Դուք տապալել եք այս կամ այն դիվանագիտական ձեռնարկումը, դրանք կարելի էր ընդունել որպես ի գիտություն: Փոխարենը հնչում են բամբասանքային թեզիսով ակնարկներ ու անորոշ պնդումներ: Գուցե հատուկ է դեսպանի մոսկովյան բազկաթոռը, եւ Հայաստանի նորահայտ քաղաքական ուժեր կամ անհայտ անձինք այլ են տնկել այս աթոռի վրա:

– Չգիտեմ ինչքանով է «հատուկ» այս պաշտոնը, բայց ես ավելորդ կհամարեի պատասխանել այդ հերյուրանքներին, թող դա մնա մի քանի «նեղացածների» խղճի վրա:

– Պարզ է, որ դեսպանի աշխատանքը հրապարակային գործունեություն չէ եւ նրա արածի գնահատականը կարող է տալ միայն Հայաստանի քաղաքական ղեկավարությունը: Դեսպանի անձնավորությունն այստեղ հայության ուշադրության կենտրոնում է, եւ բոլորը հետաքրքրվում են՝ ո՞վ է, ի՞նչ մարդ է, ինչի՞ է ընդունակ նա: Կարող եք չկասկածել, որ արձագանքները հասնում են նաեւ Երեւան: Գուցե հարկ կա ավելի հաճախ հանդես գալ Ռուսաստանի մամուլում, չնայած վերջին շրջանում Ձեր ակտիվությանը:

– Գուցեեւ այդպես, բայց դա մասնավոր պահ է: Այդ առումով ես ինձ ավելի շատ պատասխանատու եմ զգում այն բանի համար, որ Ռուսաստանի զանգվածային լրատվության միջոցներում պահպանվի հայատեսակ մթնոլորտ: Դեսպանության մամլո ծառայության առջեւ խնդիր է դրված առավելագույնս օժանդակել Հայաստանի կյանքի բոլոր կողմերի օբյեկտիվ լուսաբանմանը: Ռուսաստանի պրոֆեսիոնալ լրագրողի կարծիքը շատ կարեւոր է մեզ համար: Այս տարի երկու խումբ լրագրողներ ենք ուղարկել Հայաստան, կազմակերպել ենք նաեւ ԱՊՀ երկրների լրագրողների պատվիրակության այցը, մերձբալթյան երկրների դեսպանների աջակցությամբ երեւան մեկնեցին նաեւ այդ երեք պետությունների մամուլի ներկայացուցիչները:

Ի դեպ, մենք ի մի ենք բերել հիշյալ եւ մասնավոր այլ՝ այցերից հետո ռուսաստանյան մամուլում հրապարակված բազմաթիվ նյութերը եւ առաջիկայում դրանք առանձին գրքով կհրատարակենք Մոսկվայում: Իսկ Հայաստանում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն կամ կազմակերպված միջոցառում պատշաճ մակարդակով է լուսաբանվում ռուսաստանյան մամուլում, եւ մենք շարունակելու ենք լրջորեն հետեւել դրան:

– Եվ վերջինը, որ հարց չէ, այլ փաստացի արձանագրություն: Դեսպանությունը բավականին հաճախ է կազմակերպում կամ մասնակցում ամենատարբեր մշակութային, հասարակական-քաղաքական միջոցառումների դեսպանատան երեկոներ, ցուցահանդեսներ, համաժողովներ, ընդունելություններ, հյուրախաղեր եւ այլն, էլ չենք ասում երկրաշարժի 10-րդ տարելիցին նվիրված միջոցառումների շարքը, որոնցից կենտրոնականին մասնակցեց նաեւ վարչապետ Պրիմակովը:

– Դրանք էլ են մտնում մեր դիվանագիտական խնդիրների մեջ: Ինչքան շատ ճանաչեն մեզ, այնքան ավելի արդյունավոր կլինի մեր ազգային-պետական քաղաքականությունը: Տվյալ դեպքում՝ Ռուսաստանում: Եվ մենք մեր գործունեության մեջ այս տարում նույնպես չենք սահմանափակվելու միայն քաղաքական ջանքերով, այլ շարունակելու ենք արդեն ավանդույթ դարձած հասարակական մեծ հնչեղություն ունեցող հոգեւոր-մշակութային եւ հրատարակչական գործունեությունը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
Մոսկվա

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Արդահանի քաղաքապետի օգնության կոչը

Փարիզի «Յառաջ» թերթի հունվարի 4-ի համարը տեղեկացնում է, որ թուրքական «Հյուրրիյեթ» թերթը նախորդ օրը տպագրել է հայտնի լրագրող Ց. Չյոլաշանի «Արդահանն օգնություն է հայցում» խորագրով նյութը, որտեղ ամփոփվել է քաղաքապետի նամակը: Դրանում բարեւար անհատների եւ կազմակերպությունների ուշադրությանն է հանձնվում քաղաքի բազմաթիվ, այդ թվում՝ կրթության, առողջապահության, ճանապարհների եւ ջրատար ցանցերի հարցերը, որոնք անմիջական լուծման կարիք ունեն: Հոդվածում նշվել է, որ բնակչության թիվը, որ 1985-ին եղել է 207 հազար, նվազել է մինչեւ 113 հազար: Համալսարանական մուտքի ընդհանուր քննություններում քաղաքը գրավել է նախավերջին տեղը: Թշվառությունը համատարած երեւույթ է քաղաքում, որտեղ աշակերտության մեծ մասը կոշիկների փոխարեն «սեւ ծգախեծից ոտնամաններ» է հագնում՝ անտեսելով դրանց հակառողջական բնույթը: Ամենալուրջը, սակայն, խմելու եւ ոռոգման ջրի խնդիրն է: Երկու հազար մետր բարձրության վրա գյուղեր կան, որոնք հատկապես ծմռան ամիսներին հավելյալ ծանր դժվարությունների առաջ են կանգնած՝ միջոցների անբավարարության հետեւանքով: Գործազրկությունը ծայրաստիճան բարձր է: Մարդիկ դաշտային բնակավայրերից խույս են տալիս սոցիալական եւ տնտեսական զանազան պատճառներից ելնելով: Արդահանում կատարված ամենակարեւոր ներդրումը եղել է մսի գործարանը, որտեղ ընդամենը 15 հոգի է աշխատում: Կուսակալն իր նամակն ավարտել է, կրկնելով, որ սահմանային քաղաքը լուրջ կարոտ է օժանդակության:

Տպագրելով լրատվությունը, «Յառաջը» հիշեցնում է նաեւ, որ մի քանի տարի առաջ թուրքական նույն մամուլն ահազանգ էր հնչեցրել Կարսի մասին, ծանուցելով, որ «քաղաքը ծախու է»: Միտքն այն էր, թե կենտրոնի անտարբերության հետեւանքով բնակչությունը լքում է քաղաքը, եւ բազմաթիվ կալվածքներ ծախու են:

Օջալանը նախընտրում է խաղաղությունը

Քուրդ ղեկավար Օջալանը Նոր տարվա առթիվ քրդական հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, շեշտել է, թե իրենք նախընտրում են խաղաղությունը եւ քաղաքական լուծման ուղին: Նա ավելացրել է, որ եթե քուրդ ժողովրդի եւ ազգային-ազատագրական պայքարի հանդեպ բնաջնջումի քաղաքականությանը վերջ չտրվի, պատերազմն էլ ավելի ուժգին թափ է ստանալու: Խոսելով Միջին Արեւելքի քաղաքական իրադարձությունների մասին, քուրդ ղեկավարը հայտնել է, թե այնտեղ կարեւոր փոփոխություններ են արձանագրվել, եւ արաբական աշխարհն ու Իրանը քրդերի դեմ բռնական կեցվածք ընդունելու հիմքեր չունեն այլեւս: Նրա խոսքերով, եվրոպա անցնելը «Լոզանը սրբագրելու» նպատակ է հետապնդում եւ եթե Թուրքիան չհոժարի քաղաքական լուծում տալ իրենց հարցին, Լոզանից ավելի գերադաս միջազգային մի համաձայնագիր դառնալու է խնդրո առարկա: «Մենք դրա նախօրյակին ենք», ասել է նա վերոհիշյալ ելույթի ժամանակ: Այս մասին է հաղորդել Փարիզի «Յառաջ» թերթը հունվարի 5-ի համարում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

«ԱՐ»-ը ի վերջո կայացման վճռական ճանապարհ հարթեց

Հունվարի 13-ին լրացավ «ԱՐ» հեռուստաընկերության երկամյակը: Կարճատեւ ժամանակահատվածում անցնելով բուռն վարուվերումներով, շնորհիվ համառ եւ անկոտրում կամքի, այնուամենայնիվ «ԱՐ»-ը կարողացավ գոյատեւել, կայացման վճռական ճանապարհ հարթել:

Հեռուստաընկերության տնօրեն Մերուժան Տեր-Գուլանյանի խոստովանությամբ մեծ շռայլություն է հեռուստաընկերություն ստեղծելը: 96-ին տեխնիկա ձեռք բերելու նպատակով սկսվեց «ԱՐ»-ի փորձության

Նախորդ տարի հեռուստաընկերության ծախսը կազմել է 11 հազար դոլար, այս տարի 17 հազար դոլար է: Օրական 10-ժամյա եթերի համար ամսական վճարվում է 5 հազար դոլար, գումարած հաճախականության վարձակալման գումարը, որն անցյալ տարի 600 հազար դրամ էր, իսկ հեռահաղորդակցման սակագների թանկացմանը զուգահեռ զգալիորեն կթանկանա:

Այդուհանդերձ, «ԱՐ»-ը, անկախ դժվարություններից, միշտ եթերում է: «Ես ինձադասաբար եմ վերաբերվում մեր աշխատանքին, չեմ սիրում ռոպե ավել պահել հեռուստադիտողին էկրանի առջեւ, ի պատասխան այս մասին մեր հարցադրմանը Տեր-Գուլանյանը նկատեց, որ «ԱՐ»-ում, առավել եւս լրատվական ծրագրում, գրաֆնություն բացարձակ չկա, իսկ յուրօրինակ ոճը ոչ թե հեգնանք, այլ ազատություն է: «ԱՐ»-ում սահմանափակումներ չկան, որի արդյունքում լրագրողն ազատ միտք, անհատականություն է դրսեւորում; հավատց Տեր-Գուլանյանը, բաց կան քեռության, ազգային անվտանգության շահերի գիտակցում: . Տեղեկատվության

ռում ինքնասիրահարվածություն», նկատեց Տեր-Գուլանյանը, զարմանք հայտնելով այն հեռուստաընկերությունների ղեկավարների մասին, ովքեր հայտարարում են, թե մրցակիցներ չունեն: Ըստ Տեր-Գուլանյանի, բոլորն, անգամ քաղաքային հեռուստաընկերությունները մրցակից են «ԱՐ»-ին: Այս առումով «ԱՐ»-ը մշտապես նորամուծության կողմնակից է եւ համոզված, որ հեռուստաընկերության ուժը սեփական արտադրանքի մեջ է: Ներկայումս «ԱՐ»-ը հեռարձակում է շաբաթական 41 սեփական ծրագիր, որոնք, ըստ Տեր-Գուլանյանի, ինքնատիպ են, չեն կրկնում որեւէ մեկին:

Ի դեպ, «ԱՐ»-ի հեռուստամեկնաբանները յուրօրինակ, հեգնական ոճով են ներկայացնում տեղեկատվությունը եւ տպավորություն է ստեղծվում, որ ճիգեր են գործադրում «ոչ ինքնասիրահարվածություն», նկատեց Տեր-Գուլանյանը, զարմանք հայտնելով այն հեռուստաընկերությունների ղեկավարների մասին, ովքեր հայտարարում են, թե մրցակիցներ չունեն: Ըստ Տեր-Գուլանյանի, բոլորն, անգամ քաղաքային հեռուստաընկերությունները մրցակից են «ԱՐ»-ին: Այս առումով «ԱՐ»-ը մշտապես նորամուծության կողմնակից է եւ համոզված, որ հեռուստաընկերության ուժը սեփական արտադրանքի մեջ է: Ներկայումս «ԱՐ»-ը հեռարձակում է շաբաթական 41 սեփական ծրագիր, որոնք, ըստ Տեր-Գուլանյանի, ինքնատիպ են, չեն կրկնում որեւէ մեկին:

Ի դեպ, «ԱՐ»-ի հեռուստամեկնաբանները յուրօրինակ, հեգնական ոճով են ներկայացնում տեղեկատվությունը եւ տպավորություն է ստեղծվում, որ ճիգեր են գործադրում

ԱԶԳ

Մարզական

ԿԱՊԵՐ

Համահայկական խաղերին ամբողջական աջակցություն

Կիպրոսում մեր թղթակից Զորջ Տեր-Բարթողից ստացած ֆաքսը տեղեկացնում է, որ այս տարվա աշնանը Երեւանում նախատեսված Համահայկական առաջին մարզական խաղերի անցկացման կազմկոմիտեի նախագահ, դեսպան Աշոտ Մելիք-Շահնազարյանը երկօրյա այցելությամբ գտնվելով Նիկոսիայում, տեսակցել է Կիպրոսի օլիմպիական կոմիտեի նախագահ Կիրիս Լազարիդեսի, Նիկոսիայի քաղաքապետ Լելոս Դեմետրիադեսի եւ Կիպրոսի մարզական կազմակերպության նախագահ Գեորգիադեսի հետ:

Կիպրացի երեք բարձրաստիճան պաշտոնյաները ամբողջական աջակցություն են խոստացել խաղերի հաջող կազմակերպման եւ անցկացման գործին: Պրն Մելիք-Շահնազարյանը բացատրել է, որ խաղերին մասնակցությունը լինելու է ըստ քաղաքների եւ ոչ ըստ ակումբների կամ պետությունների: Կիպրոսի պատվիրակությունը, բաղկացած հիմնականում ՀՅԴ-ի Հայ երիտասարդաց միության եւ ՀԲԸՄ-ի երեք Նիկոսիայի, Լիմասոլի եւ Լառնակայի ակումբների մարզիկներից, կտեղաբաշխվի Նիկոսիայի 1-ին քաղաքի դրոշի ներքո:

Պարոնայք Լազարիդեսն ու Դեմետրիադեսը ողջունել են այս գաղափարը: Վերջինս ավելացրել է նաեւ, որ հին ժամանակներում եւս մասնակցությունը օլիմպիական խաղերում եղել է ըստ քաղաքների:

Աշոտ Մելիք-Շահնազարյանը (ձախից) եւ Լելոս Դեմետրիադեսը դրոշակներ են փոխանակում

«Մեր հայ եղբայրների մեծամասնությունը ապրում է Նիկոսիայում, եւ ես ինձ հպարտ եմ զգալու տեսնելով իմ հայ ընկերներին Նիկոսիայի դրոշի ներքո մասնակցելիս», ասել է նա, պրն. Մելիք-Շահնազարյանին նվիրելով քաղաքի դրոշի փոքրացած նմուշը, ի փոխանակում վերջինիս կողմից նրան նվիրված երեւան քաղաքի դրոշի փոքրացած նմուշին:

Պրն Լազարիդեսն ընդունելով խաղերին ներկա գտնվելու հրավերը, նշել է, որ հիմնականում հայերն են մեղալներ վաստակել կիպրական հավաքականների համար միջազգային խաղերում: «Վստահ եմ, այս անգամ էլ երեւանում կիպրոսահայերը իրենց լավ են դրսեւորելու ամենատարբեր մրցույթներում», ասել է նա, կատակելով միաժամանակ, թե հնարավոր է, որ ինքն այնտեղ հայտնաբերի այնպիսի տաղանդների, որոնք կարողանան իր տեղական խմբերի մակարդակը բարձրացնել: Նրա հավաստիացումներով Կիպրոսի ժողովրդական բանկի (որի կառավարիչն ու գործադիր տնօրենն է) անձնակազմը «բարոյական եւ նյութական ամենալայն օժանդակություն է տալու կիպրոսահայ խմբին»:

Կիպրոսում իր կարճ կեցության ընթացքում պրն Մելիք-Շահնազարյանը այցելել է Մելգոնյան կրթական վարժարան, որտեղ հանդիպել է Հայաստանից եւ Արցախից ժամանած ուսանողների հետ:

Հ. Ծ.

ԲՈՆՑՔԱՄԱՐՏ

Թայսոնի հաղթական վերադարձը

Շաբաթ օրը Լաս Վեգասում անցկացվեց ծանրաբային բոնցքամարտիկներ Մայք Թայսոնի (ԱՄՆ) եւ Ֆրանսուա Բոտայի (ՀԱՀ) այնքան սպասված մենամարտը: Հաղթողը լավ հնարավորություններ էր ստանում հետագայում մրցելու աշխարհի չեմպիոնի կոչման համար: Շատերին հետաքրքրում էր, թե ավելի քան մեկուկես տարվա ընդմիջումից հետո ինչպիսին է երբեմնի ահեղ «երկաթյա Մայքը»: Մյուսները վստահ էին, որ աշխարհի նախկին չեմպիոնը առաջվա պես ուժեղ է, եւ «սպիտակ գոմեշը», ինչպես անվանում են Բոտային, երկար չի դիմանա ռինգում:

Ինչեւէ, մենամարտը եւ արդարացրեց բոնցքամարտի սիրահարների սպասելիքները, եւ շատ հարցերի պատասխան տվեց: Ասենք, որ հանդիպման առաջին ռաունդներն անցան հավասար պայքարում, բայց հետո աստիճանաբար սկսեց գծագրվել Թայսոնի առավելությունը: Զգացվում էր, որ նրա մրցակիցը փոքր-ինչ հոգնել է, կորցրել արագությունը: Մենամարտի տրամաբանական հանգուցալուծումը վրա հասավ 5-րդ ռաունդի վերջում, երբ Թայսոնի հուժկու հարվածից հետո հարավաֆրիկացի բոնցքամարտիկը տարալվեց ռինգի հատակին ու չկարողացավ այլեւս ինքնուրույն վեր կենալ նոկաուտ:

Այո, կատարվեց այն, ինչ պետք է կատարվեր: մրցամարտն ավարտվեց Թայսոնի համոզիչ առավելությամբ: Սակայն պարզ դարձավ եւ այն, որ Թայսոնն այլեւս առաջվանը չէ: Մի քանի տարվա բանտարկությունը, դրան հաջորդած որակազրկումը զուր չեն անցել: Վիճակագիրները նշում են, որ վերջին 7,5 տարվա ընթացքում ամերիկացի բոնցքամարտիկն ընդամենը 6-մարտ է անցկացրել, որոնցից 2-ում պարտվել է: Մասնագետներն պնդում են, որ 32-ամյա Թայսոնը 22 տարեկանից հետո դադարել է աճել որպես մարզիկ: Ի՞նչ է նշանակում նրան: Մարգածեւի գիտակների կարծիքով, Թայսոնն այլեւս չի կարող իրապես պայքարել աշխարհի չեմպիոնի կոչման համար:

Մի հաճելի փոփոխություն կար Թայսոնի վարքագծում: Նոկաուտից հետո նա անմիջապես օգնության հասավ ընկած տեղից բարձրանալու փորձ անող Բոտային, հետո էլ մոտեցավ նրան, գրկախառնվեց: Նախկինում նման բան ոչ մեկը չէր տեսել նրանից: Միայն առաջին ռաունդի միջադեպը տիաձ տպավորություն թողեց: Մի պահ մրցակիցներն ընբիշների նման պինդ «գրկնախառնվեցին», եւ միայն մրցավար Ռիչարդ Սթիլն ու նրան օգնության հասած տասնյակի չափ ամուր տղամարդկանց միջոցով հնարավոր եղավ բաժանել «տղաներին»:

Մարս ամսին կայանալու է աշխարհի չեմպիոններ Էվանդեր Հոլիֆիլդի (ԱՄՆ) եւ Լենոքս Լյուիսի (Անգլիա) մենամարտը: Հետագայում նրանցից մեկի հետ էլ կհանդիպի Թայսոնը:

Գրոհում է Մայք Թայսոնը

ՇԱԽՄԱՏ

Գրոսմայստերները սկսեցին

Հոլանդական Վեյկ ան Զեե քաղաքում սկսվեց ավանդական Հոգովեն փառատոնը:

Իհարկե, շախմատիստների ուշադրության կենտրոնում գլխավոր մրցաշարն է, որի 14 մասնակիցների կազմում համաշխարհային շախմատի սերուցքն է՝ Կասպարովի գլխավորությամբ: Գլխավոր մրցանակի հիմնական հավակնորդները հայտնի են, եւ մրցաշարի առաջին տուրերը հաստատեցին նրանց բարձր կարգը:

Մեկնարկային տուրում 7 հանդիպումներից 2-ն ավարտվեց կողմերից մեկի առավելությամբ. աշխարհի երկրորդ շախմատիստ Վիշվանաթան Անանդը (Հնդկաստան) սեւերով հաղթեց մրցաշարում ամենացածր անհատական գործակից ունեցող Դմիտրի Ռեյնդերմանին (Հոլանդիա), իսկ Վասիլի Իվանչուկ (Ուկրաինա), Լյուկ վան Վելի (Հոլանդիա)-Վլադիմիր Կրամնիկ (Ռուսաստան), Ալեքսեյ Շիրով (Իսպանիա)-Ռուսլան Կասիմջանով (Ուզբեկստան), Ալեքսեյ Երմոլինսկի (ԱՄՆ)-Պյոտր Սվիդլեր (Ռուսաստան), երուն Պիկես (Հոլանդիա)-Իվան Սոկոլով (Հոլանդիա) պարտիաները:

Երկրորդ տուրում մասնակիցներն ավելի ագրեսիվ խաղացին. միայն երկու հանդիպում ոչ-ոքի ավարտվեց: Այդպես խաղացին Թոփալովը եւ Սվիդլերը, Իվանչուկը եւ Կասիմջանովը: Կասպարովը հաղթեց վան Վելիին, Անանդը՝ Պիկեսին, Կրամնիկը՝ Երմոլինսկուն, Թիմանը՝ Ռեյնդերմանին, Շիրովը՝ Սոկոլովին:

Երկու տուրից հետո մրցաշարը միանձնյա գլխավորում է հնդիկ շախմատիստ Անանդը՝ 2 միավոր, հաջորդ տեղերում են Կասպարովը, Կրամնիկը, Թոփալովը, Շիրովը՝ 1,5-ական, Իվանչուկը, Սոկոլովը, Պիկեսը, Երմոլինսկին, վան Վելին՝ 0,5-ական, Ռեյնդերմանը՝ 0 միավոր:

Երեկ մրցաշարում հանգստյան օր էր, իսկ երրորդ տուրի հանդիպումները կանցկացվեն այսօր:

ԹԵՆԻՍ

Առաջին արդյունքները

Երեկ Մելբուռնում մեկնարկեց «Մեծ սլեմ» շարքի 4 մրցաշարերից առաջինը՝ Ավստրալիայի բաց առաջնությունը: Դրան նախորդեցին «կանաչ աշխարհամասում» անցկացված մի շարք մրցաշարեր, որոնցից ամենանշանակալիցը Սիդնեյում անցկացվածն էր:

Մեծ հետաքրքրություն էր առաջացրել կանանց մրցաշարի եզրափակիչ խաղը, քանի որ հանդիպում էին աշխարհի առաջին ու երկրորդ թենիսիստուհիներ Լինդսեյ Դեյվենպորտը (ԱՄՆ) եւ Մարտինա Հինգիսը (Շվեյցարիա): Հաղթեց եւ գլխավոր մրցանակին արժանացավ Դեյվենպորտը:

Տղամարդկանց պայքարում եւս հաջողությունն ուղեկցեց ԱՄՆ-ի ներկայացուցչին: Թող Մարտինը վճռական խաղում առավելության հասավ իսպանացի Ալեքս Կորեչայի նկատմամբ:

Ավստրալիայի բաց առաջնությունն սկսվեց անակնկալներով: Խոսքը հանդիպումների արդյունքների մասին չէ, այլ այն, որ հենց սկզբից մասնակցելուց հրաժարվեցին այնպիսի հայտնի թենիսիստներ, ինչպիսիք են Մարսելո Ռիոսը (Չիլի) եւ Գորան Իվանիսեւիչը (Խորվաթիա): Երկու դեպքում էլ պատճառը վնասվածքն է:

Իվանիսեւիչին փոխարինած Դեյեն Կարբախերը (Գերմանիա) պարտություն կրեց Անդրեյ Չերկասովից (Ռուսաստան)՝ 3-6, 4-6: Հաջողության հասավ նաեւ ռուսաստանցի մեկ այլ մարզիկ՝ պատանի Մարատ Սաֆինը: Նա 6-2, 7-6, 7-6 հաշվով հաղթեց Դեյիդ Պրինոսիլին (Գերմանիա): Աշխարհի թիվ երեք թենիսիստ Ալեքս Կորեչան մեծ դժվարությամբ (6-3, 4-6, 3-6, 7-6, 6-2) առավելության հասավ ճապոնացի Սուձուկիի նկատմամբ:

Ավստրալիայի բաց առաջնության հաղթողները հայտնի կդառնան հունվարի 31-ին:

Լինդսեյ Դեյվենպորտ

ԼՈՒՐԵՐ

Բուրեն կխաղա «Ֆլորիդա Պանտերսում»

Վերջապես որոշվեց Հոկեյի ազգային լիգայի (NHL) հայտնի գործադուլավորի՝ ռուս լեգեոնական Պավել Բուրեի բախտը: «Վանկուվեր Կենակս» ակումբի գլխավոր մենեջեր Բրայան Բուրկն ի վերջո համաձայնվեց թիմի խաղացողի՝ այլ ակումբ տեղափոխվելու հարցը: Բուրեն այժմ հանդես կգա «Ֆլորիդա Պանտերս» թիմի կազմում: Նրա հետ Ֆլորիդա են տեղափոխվում թիմակից երկու պաշտպաններ, դրա փոխարեն «Կենակսի» կազմում կհայտնվեն «Պանտերսի» 4 խաղացողներ: Գործադուլն ավարտվում է: «Ֆլորիդա Պանտերսի» կազմում իր առաջին խաղը նա կանցկացնի «Նյու Յորք Այլենդերս» թիմի դեմ հունվարի 20-ին:

Աշխարհի գավաթի խաղարկությունում

Գերմանական Ուոդոլֆինգ քաղաքի մերձակայքում անցկացվեցին բիաթլոնի հետաքրքիր մրցաձեւերից մեկի՝ հետաձգումով վազքի մրցումներ, որոնք մտնում էին աշխարհի գավաթի խաղարկության հաշվարկի մեջ: Տղամարդիկ հանդես եկան 12,5 կմ մրցաշարածությունում: Ե՛վ արագությամբ, ե՛ւ դիպուկ կրակելու հմտությամբ աչքի ընկավ Ֆրանսիացի Ռաֆայել Պուարոն, որը շատ հաջող է հանդես գալիս այս մրցաշրջանում: Նա գրավեց առաջին տեղը՝ իրենից հետ թողնելով այնպիսի հայտնի մարզիկների, ինչպիսիք են գերմանացիներ Լիգո Գրոսը եւ Սվեն Ֆիշերը: Կանանց մրցումներում հաջողության հասավ ուկրաինուհի Ալյոնա Զուբրիլովան: Մի քանի օր առաջ իր ընկերուհիների հետ նա անպարտելի հաղթանակ էր տարել 4x7,5 կմ փոխանցումավազքում, իսկ այս անգամ առաջին տեղը գրավեց 10 կմ հետաձգումով վազքում: Երկրորդ մրցանակակիր դարձավ օլիմպիական խաղերի չեմպիոնուհի Կարին Նյուինգրենը (Ֆրանսիա), իսկ երրորդը՝ Մագդալենա Ֆորսբերգը (Շվեդիա):

Չինացիների վստահ հաղթանակը

Նոր Զելանդիայի Վելինգտոն քաղաքում անցկացված ջրացատկի աշխարհի գավաթի հերթական փուլում բացառիկ հաջողության հասան չին մարզիկները: Նրանք հաղթանակ տարան անցկացված 9 մրցաձեւերից 8-ում: Ռուսաստանի մարզիկները, որոնք ավանդաբար լավ դիրքեր ունեն այս մարզաձեւում, անհաջող հանդես եկան:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՌԱՇՏԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հեստերով

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայ-վրացական սահմանը հերոինի՞ց է

Վրաստանի Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում էդվարդ Շեւարդնաձեի ներկայացուցիչ Գիգլա Բարամիձեի վկայությամբ, ներկայումս հայ-վրացական սահմանագծում շահագործվում է շուրջ 150 ճանապարհ, որոնք չեն վերահսկվում վրաց սահմանապահների կողմից: Այս մասին նա հայտնել է շաբաթ օրը՝ հունվարի 16-ին, իր հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ: Ինտերֆաքս գործակալությանը նա հայտնել է, որ Հայաստանի եւ Վրաստանի սահմանն ըստ էության թափանցիկ է եւ պաշտպանվում է ոչ այնքան զգոն, որչափ, օրինակ, թուրք-վրացականը: Նրա կարծիքով այս հանգամանքը նպաստում է մաքսանենգության զարգացմանը. «Երբ սահմանը չի հսկվում, հնարավոր է դառնում տեղափոխել ոչ միայն թմրանյութ, այլեւ զենք», հայտարարել է Գիգլա Բարամիձեն:

Միեւնույն ժամանակ Վրաստանի պետական սահմանի պաշտպանության գերատեսչությունից տեղեկացրել են, որ 1999-ի գարնանից շրջանցող ճանապարհներին կտեղադրվեն շարժական հսկիչ կետեր: Նման սեզոնայնությունը պայմանավորված է նրանով, որ ձմռան ամիսներին առաջ ձյան պատճառով փոխադրամիջոցները հնարավորություն չունեն կտրելու բարձրադիր ճանապարհները:

Գիգլա Բարամիձեի խոսքը փաստորեն Հայաստանի հասցեին հնչած մեղադրական է, եւ պատահական չէ, որ հեղինակել է հատկապես Սամցխե-Ջավախեթի շրջանի լիազորը: Իր տեղեկությունների համաձայն, վերջին երկու տարիների ընթացքում արձանագրվել է զենքի անօրինական տեղափոխման չորս դեպք: Հիշեցնենք, որ հենց տվյալ շրջանում դեռ տեղակայված են ռուսական զորակետեր, որոնց նկատմամբ Վրաստանի վերաբերմունքը հայտնի է:

Ինչ վերաբերում է Հայաստանից Վրաստան թմրանյութերի տեղափոխության խնդրին, ապա հետաքրքիր է տեղեկանալ Ալեքսանդր Ջելիչենկոյի խոսքին. նա գնդապետ է եւ տնօրինում է ՄԱԿ-ի «Ընդդեմ թմրանյութերի» ծրագրի կենտրոնասիական տարածաշրջանային բաժանմունքը: Միաժամանակ նա ղեկավարում է «Օշի հանգույց» նախագիծը. նշենք, որ Անդրկովկաս մուտք գործող թմրանյութերի, գլխավորապես հերոինի գերակշիռ մասը Կենտրոնական Ասիայից է: Ես նրա հետ հանդիպել եմ Բիշքեկում 1998-ի վերջին: Հանգամանալից խոսելով թմրանյութերի առաքման ճանապարհների եւ ձեւերի շուրջ, նա կարճ անդրադարձել է անդրկովկասյան իրավիճակին, նշելով, որ «Հերոինի մեծ ճանապարհը փաստորեն մեծախի նոր մեծ ճանապարհի կրկնությունն է»:

«Անդրկովկաս հերոինը 1998-ից որպես վերջնական ապրանք, այլ ոչ թե հումք, մուտք է գործում հետեւյալ առանցքով. Պյանջի գետափ, Թուրսուն-Զադե, Դուշանբե, Օշ, Նամանգան, Տաշքենդ, Աշգաբադ, Թուրքմենբաշի, հրաշեղից ծովային ճանապարհով՝ Ադրբեջան: Իրանի Իսլամական Հանրապետությունը, շնորհիվ իր նեղին քաղաքականության, բարոյահոգեբանական միջավայրի եւ կրոնական ու իրավաբանական օրենքների, չի ներգրավված այս գործում: Անդրկովկասը չի կարող թմրանյութ ստանալ Իրանից: Թմրանյութ պահելու դիմաց Թեհրանը սահմանել է մահապատիժ: Ադրբեջանից հերոինը երկաթուղային ճանապարհով՝ մեկը դեպի Ռուսաստան (Դաղստան), մյուսը՝ Վրաստան, դուրս է գալիս Ռուսաստան եւ Եվրոպա:

Հայաստանը ներգրավված չէ այս առեւտրում, քանզի հարցեր ունի Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ: Իրանից, ինչպես ասացինք, նա նույնպես չի կարող ստանալ թմրանյութ: Հայաստանում եղած թմրանյութերը բացառապես անհատական օգտագործման խնդիր են»:

Թմրանյութը, նավթի օրինակով, վաղուց արդեն քաղաքական ապրանքատեսակ է: Այնտեղ, որտեղ կա նավթ կամ հերոին, միշտ էլ բախվում են շատ երկրների շահերը: Գիգլա Բարամիձեի խոսքը, անտարակույս, քաղաքական պատվեր է՝ ուղղված հավանաբար Իրան-Հայաստան-Ռուսաստան առանցքի դեմ: Միեւնույն ժամանակ սա անհեթեթ պատվեր է, ասել է թե «Հայաստանը ՕՊԵԿ-ի անդամ է եւ նավթ է արտահանում»:

ԱՐԻՄ ԴԱՇՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ

ՆԱՏՕ-ն մոտ ժամանակներս ռազմական գործողություն չի սկսի Կոսովոյում

ԲՈՆՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Հյուսիսատլանտյան դաշինքը մտադիր չէ մոտ ժամանակներս ռազմական գործողություն իրականացնել Կոսովոյում: Այսօր այսպիսի հայտարարությամբ այստեղ հանդես է եկել ՆԱՏՕ-ի զինվորական կոմիտեի նախագահ Քլաուս Նաումանը: «Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունը ինչ-որ համապարփակ ինտերվենցիոնիստական ուժ չէ եւ մտադիր չէ համաշխարհային ժանդարմի գործառույթներ ստանձնել, ասել է նա «Տագեսշպիգել» լրագրի թղթակցի հետ կայացած հարցազրույցի ժամանակ: Մենք չունենք այնպիսի սխեմա, որով հնարավոր լիներ որոշել, թե ՆԱՏՕ-ն երբ պետք է ներխուժում իրականացնի եւ երբ՝ ոչ»: «ՆԱՏՕ-ն ամեն դեպքում իր առջեւ նպատակ է դնում համապատասխան գործողությունների համար ստանալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մանդատը, ընդգծել է գերմանացի գեներալը: Դաշինքի կողմից առանց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հրահանգի ռազմական գործողություններ իրականացնելը հնարավոր է միայն բացառիկ դեպքերում»:

Առաջնային կարեւորություն է տրվում սպառազինությունների վերահսկմանը

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության մեջ առաջնային կարեւորություն է տրվում սպառազինությունների վերահսկմանը: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, այս մասին վկայում է ԱՄՆ-ի պետքարտուղար Մադլեն Օլբրայթի «Լոս Անջելես թայմս» թերթին տված հարցազրույցը, որտեղ նա շարադրել է իր արտաքին քաղաքական առաջնային խնդիրները: Նրա կարծիքով, չափազանց կարեւոր է թույլ չտալ, որ Ռուսաստանը վերածվի զանգվածային ոչնչացման զենքի անլեգալ վաճառքի շուկայի: Ինչպես կարծում է Օլբրայթը, նման վտանգն առկա է այն «ֆինանսական խնդիրների» պատճառով, որոնց բախվում է Մոսկվան:

Պետերբուրգում սկսվեց քաղաքը հանցագործներից մաքրելու գործը

ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարար Սերգեյ Ստեպաշինն այսօր ժամանեց Սանկտ Պետերբուրգ, որտեղ քաղաքը հանցագործներից մաքրելու մասշտաբային գործողություն է սկսվել: Նախարարը լրագրողներին ասաց, որ սկսված գործողությունը «կարճատեւ ձեռնարկում չէ, գրոհ չէ, այլ հետեւողական աշխատանք, որն սկսվում է այսօրվանից եւ կշարունակվի այնքան, մինչեւ որ քաղաքը իսկապես ազատվի հանցավոր ավազակային տարրերից»: Այդ աշխատանքին մասնակցելու են ներքին գործերի նախարարության, անվտանգության համապետական ծառայության, համապետական սահմանային ծառայության, պետական մաքսային կոմիտեի, հարկային ոստիկանության եւ այլ կառույցների ստորաբաժանումներ: Սերգեյ Ստեպաշինն ընդգծեց, որ ամեն ինչ արվելու է օրենքի շրջանակներում, Սահմանադրության շրջանակներում»: Նախարարը նշեց, որ «կաշառատվություն կա իշխանության բոլոր մակարդակներում», եւ նրա խոսքերով, «անծանոթ, անկախ իրենց զբաղեցրած պաշտոններից, անկախ այն բանից, թե իշխանության ինչպիսի կառույցներում են աշխատում, պետք է պատասխան տան օրենքի առաջ. այսպիսին է նախագահի դիրքորոշումը»: «Այդպես կլինի թե՛ Սանկտ Պետերբուրգում, թե՛ Լենինգրադի մարզում», ասաց նա:

Հյուսիսային Ամերիկայում սաստիկ ցրտեր

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 18 ՀՈՒՆՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հյուսիսային Ամերիկայի մի շարք շրջաններում ձնաբուք եւ սաստիկ ցրտեր են, որը լուրջ պրոբլեմներ է առաջացրել մի քանի խոշոր քաղաքներում: Կանադական Տորոնտո քաղաքը ծածկված է ձյան մետրանոց շերտով, ավտոմոբիլային եւ երկաթուղային երթեւեկությունը կաթվածահար է: Քաղաքը խորանում է ըստ Ցելսիուսի մինուս քսան աստիճանով եւ ժամում 60 կիլոմետր արագությամբ քամով: Միացյալ Նահանգների արեւելքում նման եղանակը հանգեցրել է էլեկտրահաղորդագծերի բազմաթիվ կտրվածքների՝ առանց էլեկտրականության թողնելով հարյուր հազար տներ: Հետաձգվել են ավիաչվերթները Նյու Յորքի բոլոր երեք օդանավակայաններում: Օդերեւութաբանները կանխատեսում են ձյուն նաեւ հետագա օրերին:

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (ԲՀԻՕՀՀՄ)

ԲՀԻՕՀՀՄ-ը հայտարարում է թարգմանիչների մրցույթ «Women's Human Rights Step by step. A Practical Guide to Using Human Rights Law and Mechanisms to Defend Women's Human Rights» գիրքն անգլերենից հայերեն թարգմանելու համար:

Մրցույթին մասնակցելու համար դիմումների (CV, աշխատանքային փորձ եւ թարգմանած գործերի ցուցակ) ներկայացման վերջին ժամկետը փետրվարի 1-ն է:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, Երեւան, Այգեձորի 53բ, հեռ. 272119, AT&T, 151 088:

ARCO

Կանադական «ARCO» ֆիրման մաքչելի գներով առաջարկում է արտասահմանյան, հիմնականում ամերիկյան մակնիշի ավտոմեքենաների պահեստամասեր եւ զանազան ապրանքներ:

Հասցեն՝ Էջմիածնի խճուղի, Արեւմտյան թաղամաս եւ Արգավանդ տանող խաչմերուկից 250 մետր դեպի Փարֆար:

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

Հարմարավետ խանութ՝ անհրաժեշտ բոլոր սարքավորումներով: Գտնվում է Հրայլա Քոչար փողոցի տնակաշինության մոտ (երկաթգծի մոտ): Տարածքը 50 մ²:

Զանգահարել հեռախոսս 22-43-93 *համարով*

ԼՈՒՇԱՐՎՈՒՄ Է

«Երազ» ՍՊԸ-ն, գրանցված Նոր Նորքի համայնքում, վկայական թիվ 01Ա 017220, գրանցման համարը՝ 282.110.01371, հարկային կոդը՝ 00814139:

Պարտք ու պահանջի դեպքում դիմել Նորքի 5 մ/շ, Միկոյան 35 հասցեով:

Հաշվի առնելով, որ ուշացած ազատամարտիկ-մահապարտ բժիշկ Հարություն Հարությունյանի առողջական վիճակը գնալով վատթարանում է եւ նրա միակ փրկությունն արտասահմանում բուժվելն է, խնդրվում է բոլոր հարազատներին, ընկերներին, բարեւարներին, գործարարներին եւ բարի կամեցողներին ցուցաբերել ֆինանսական աջակցություն, ըստ հնարավորության:

Ֆինանսական աջակցություն ցուցաբերողներին շնորհակալություն կհայտնվի մամուլով, ռադիոյով, հեռուստատեսությամբ:

Ֆինանսական օգնություն ցուցաբերողները կարող են դիմել՝ Ուշան գյուղում՝ Մուշեղ Գասպարյանին, հեռ. 2-18:

Երեւանում՝ Ագրոբանկ, քաղաքային մասնաճյուղ, հաշիվ թիվ. 142010051209

ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

19 հունվար

ՇՏ

9.05 Հեռուստասերիալ «Ոսկե կինոնոյով ազգմիկը» (2-րդ սերիա)
10.00 Հայլուր
10.15 Գ/Ֆ «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» (2-րդ մաս)
11.25 21 րոպե
11.45 Հիթ շերտ
12.15 Քառուղիներ
13.00 Հայլուր
13.15 Կարճամետրաժ կինոնկար «Հաճոյս մարդը»
17.00 Հայլուր
17.20 Մուլտֆիլմ «Լյու եղբայրները»
17.55 Գ/Ֆ «Որտեղ էիր, մարդ ասածս» (2-րդ մաս)
19.10 Հեռուստաքոսոն
20.00 Հայլուր
20.30 1 լուր
20.45 Շրջադարձ
21.10 Ֆուտբոլ, ֆուտբոլ
21.20 Հեռուստասերիալ «Խուզարկու Նեռ Բրիգեսը»
22.10 Գ/Ֆ «Աֆրիկա»
24.00 Հայլուր

ԱՐ

09.00 Վահրամ Մարտիրոսյանը եւ Քրիստինա Գասպարյանը «Տոմար» լուսավոր ժանանցային հաղորդաշարում
10.00 «Հոյարտություն եւ նախապաշարում» մելոդրամա (մաս 1-ին)
19.00 Մուլտեր
19.30 Սուրհանդակ
19.45 Գ/Ֆ «Գեսնուդի»
21.30 Սուրհանդակ
22.00 Հարդարակ
22.15 Խուժան ալիք
22.35 Գ/Ֆ «Այլ ալիք»
(23.30 Սուրհանդակ)
00.50 Հոգի
00.55 Գիշերային կինոսրահ. «Ճիչը»
02.35 Սուրհանդակ

ԳԼ

7.00 Բարի լույս
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Դաժան հրեշակը»
11.30-15.45 Բիգնեթ TV
16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Սինդրաղի նոր արկածները»
16.50 Երգանիկ դիտված
17.35 Մինչեւ 16 տարեկան եւ ավելի
18.00 Սերիալ «Դաժան հրեշակը»
19.00 Նորություններ
19.15 Գուշակիր մեղեդին
19.45 Այստեղ եւ հիմա
20.10 Թեմա
20.55 Սերիալ «Մամուխում երգողները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.50 Գ/Ֆ «Կիթառով աղջիկը»
00.30 Օրվա նորություն
00.45 Հատերգ. նվիրված փրկարարի օրվան

ՌՏՎ

8.00, 10.30, 10.50 Բարի լույս, Ռուսաստան
10.15 Հերթապահ բաժանմունք
10.35 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.55 Ադրանքներ փոստով
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Երաժշտություն, երաժշտություն...
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.15 Լուրեր
12.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքներ»
15.30 Սերիալ «Սոխակի աղաստանը» (Անգլիա)
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 Հեքիաթային եռաշարք
17.30 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.30 Աշտարակ
18.55 Հանակարգիչ
19.10 Գ/Ֆ «Վտանգավոր շրջադարձ» (2-րդ սերիա)
20.00 Կինոդիտաստոն «Սիրո դեմքեր»
20.30 Հերթապահ բաժանմունք
20.40 Մի իրադարձության պատմություն
21.40 Մանրամասներ
21.50 «Անշլագը» ներկայացնում է
22.25 Պրեմիերա. Գ/Ֆ «Զրահապատի վերադարձը» (1-ին, 2-րդ սերիաներ)
00.30 Ավտոքոռ
01.00 Հերթապահ բաժանմունք

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
հեռախոսով (569393, 581351) • տեղեկագրերով • էլեկտրոնային տարբերակներով (մագնիսական սկավառակներով, INTERNET ցանցով)

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արտակունեաց 2 Գրանցման թիվ 65. Դասալ 69149, Պատվեր 977 Տիրաժը 4000 Ստորագրված է տպագրության 18. 01. 1999 Գինը 100 դրամ

digitised by A.R.A.R.@